

նայնպէս էր եւ) սան նորա (Աւտայի) խորո-
վիրութեամբ, կուսան համեստ որպէս զաւրի-
նաւոր ոք, եւ ոչ ամենեւին ունել (Չ՝ ունե-
լով) անդուռն բերան, նման ա՛յլ (Չ՝ այլոց)
կանանց» (Բ, ճբ, 346) : Ի բանին խորենացող
անդուռն բերան ըսուած է շատախօս կանանց
համար. յունարէն *ἄθροστομος ἄθροσος*
Անդուռն, Qui n'a point de porte: au fig.
Effréné, sans frein, en parlant d'une langue
indiscrete ou bavarde. Եւ *ντομα* բերան, գղ.
Bavard, Indiscret. որ եւ *ἄθροσολωσσος* Ան-
դուռն լեզու. իսկ առ Վրթանիսի անդուռն
բերանով նշանակէ «Յանդանարար, լրբա-
բար» :

Կայ Անդուռն բերանով եւ առ ա՛յլ մա-
տենագիրս ի սկզբան Եւթներորդ դարուն.
«Քանզի զյիշատակելին նեստոր անդուռն
բերանով յանդիւնի ասել երկուս որդիս, մի
զՈրդին Աստուծոյ, եւ միւս՝ զ՛ի Մարիամայ
ծնեալն» (Աբրահամ կաթողիկոս Ա Աղբա-
թանեցի, «Թուղթ Շրջազայական», Գիրք
Քրթոց, 192). — «Նոյնպէս եւ երկերիւրքն
որ յԵփեսոս ժողովեցան, եւ զամպարիշտն
նեստոր նզովեցին... որ անդուռն բերանով
ասէ. Ոչ է պարտ եւ արժան զՄարիամ Սուրբ
կոյս՝ Աստուածածին խոստովանել, այլ մար-
դածին» (Կոմիտաս կթ., «Թուղթ ի Պարսս»,
Գիրք Քրթոց, 215), որ ի հրապարակելունն
ի 861թ. սպ. Վաղարշապատու, 1894, երես
306, գրեալ է. «որ յանդուռն բերանով ասէ».
— «Եւ թէ հաւանեցին միաւորութիւն խոս-
տովանելով, որպէս էն իսկ, ոչ եւս ա՛յլ հա-
մարձակեցին անդուռն բերանով երկուց
ձայնիւ զաւղանջել» (Սուտ-Մովսէս խորե-
նացի, «Եղծ գրաժանողացն», Գիրք Քրթոց,
27). նոյն եւ ի Սամ. Անեցի, ծան. 11, երեսք
260—261 :

«Ինքեանք գերանալից աչաւք եղեալք՝
դատին միշտ չարաչար բամբասանաւք եւ
անդուռն բերանով զչիղս յանցանաց վարուց
նոցա» (Ն. Շնորհալի, Ընդհ., 39). — «Ո՛վ
թշուառութեանս. այնքան յաչաղանքն գը-

րաւեալ զառաջնորդական զմիտս, որպէս զի
զայսքան իմ զվէրս թողեալ առանց ջանի
բժշկութեան, զայլս անդուռն բերանով նա-
խատեմ. մոռացեալ զՏեառն երգիծանել զայ-
նոսիկ՝ որք գերանովք ջանային (սպ. ջանա-
ցին) զչիղս դատել» (Ն. Լամբրոնացի, Ատե-
նաբանութիւն, 171) :

«Աներեսանակ արձակ բերանով» (Եղշ.,
Բ, 29, մեծադիրն).

«Աներեսանակ բերան» (Թէոդ. Քոթ.,
Ընդդէմ Մայրագ., 151).

«Անսանձահար բերան» (Պղատոն, Աւ-
րէնք, Գ, 113).

«Անսաձելի բերանով» (Փիլոն). տե՛ս
Անդուռն եւ ի Հայկզ. :

«Ամենեցուն մեզ յայտնի է» (Նոր.,
Պտմ., Ա, գ, 14). «Որպէս ամենեցուն
յայտնի է» (Նոր., Պտմ., Ա, ժդ, 72. Բ, դա;
379) : Այլուր՝ «Որպէս ամենեցուն է յայտնի»
(Ա, բ, 10). «Եւ այս յայտնի է ամենեցուն»
(Ա, ե, 25). Վրթանէս Քերթոզ՝ «Այդ ամե-
նեցուն յայտնի է՝ թէ սուտ խաւսիք» (Յա-
ղագս (կամ Ընդդէմ) Պատկերաւարտաց,
339) : Յայլ գիրս. «Որպէս ամենեցուն է քա-
ջայայտ» (Աթանաս. Գր. Նազ. Առ որս.՝
Հայկզ. ի Քաջայայտ). — «Ո՛չ ամենեցուն
իցէ քաջայայտ» (Գր. Նազ., Առ որս.).
«Ամենեցուն յայտնի է» (Եղնիկ, [1826], 11).
— «Այն՝ ամենեցուն յայտ է» (անդ., 281).
«Ամենեցուն յայտնի է» (Պիտ., Գ, գ, 381.
Չ, ե, 469. տե՛ս Նոր., Պտմ. = Պիտայից
Գիրք) :

«Եւ զի այսպէս է, ամենայն ումեք յայտ
է» (Ոսկ., Մտք., ԺՉ, 25). «Եւ զի այս այս-
պէս է, ամենայն ումեք յայտ է» (անդ., ԺԷ,
272) : Գրեալ էի ի 26 Յունիսի 1912 ի Նոր.,
Պիտ. = Ոսկ. ի համարն «Եւ զի այս այսպէս
է» եւ աստ գրեցի յ9 Մայիսի 1914 :

ՆՈՐԱՅՐ Ն. ԲԻԻԶԱՆԿԱՑԻ

ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ ԱՍՏՈՒԱԾԱՇՆՁԻ ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ

ՀՄՍՀ Գիտութիւնների ակադեմիայի
Հր. Աճառեանի անուան Լեզուի ինստիտուտի
աւագ գիտական աշխատող, գրաբարի եւ
արեւելահայերէնի մասին աշխատութիւնների
բեղուն հեղինակ Վարազ Դաւթի Առաքելե-
նը 1984 թ. Երեւանում հրատարակել է
Հինգերորդ դարի հայ քարգմանական գրա-
կանութեան լեզուն եւ ոմը ուսումնասիրու-
թիւնը՝ «Ներածութիւն», էջ 5-59, եւ «Բա-
նասաչարք», էջ 60-228 : Ուշադրութեամբ
եւ մեծ հետաքրքրութեամբ կարդացինք, եւ
ահա մեր դիտողութիւնները, եւ ոչ թէ դրա-
խօսութիւնը, քանի որ ընդհանուր դնահա-
տումները միշտ էլ խարուսիկ կողմ ունեն :

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

Գրքի վերնագիրը

Սա չի համապատասխանում բովանդա-
կութեանը. էջ 4-ի մատենագիտական տեղե-
կութեան մէջ ասուած է. «Աշխատութիւնը
նուիրուած է հայ անդրանիկ գրքի՝ Աս-
տուածաշնչի լեզուի ու ոճի ուսումնասիրու-
թեանը». հաւանաբար նպատակայարմար չէր
հեղինակի գործածած «Աստուածաշունչ,
Սուրբ գիրք, Սրբազան գիրք» անուանումնե-
րը ցոյց տալ գրքի ակնառու տեղում. սա կա-
րելի է «նրբացուցիչ դէպք յանցանաց» հա-
մարել. բայց մի օր ի՞նչ անուն պիտի տրուի
Աստուածաշնչի քննական եւ համահաւք
հրատարակութեանը, որին սփիւռքահայու-
թիւնը սպասում է Երեւանից :

Գրքի ներքին ձեւաւորումը

Ուշադիր ընթերցողը կը նկատի ծայր
աստիճան թափթփուածութիւն՝ բազմաթիւ
տառասխալներ կամ տպագրական վրիպակ-
ներ մանաւանդ գրաբար բառերում, ան-
հրաժեշտ ընդդժումների կամ շեղատառերի
անհետեւողական գործածութիւն, անհրա-
ժեշտ չափերտների պակաս, բացուող բայց
չփակուող փակագծեր կամ ընդհակառակը,
փոքրատառով սկսուող գրաբար նախադա-
սութիւններ, փոքրատառով սկսուող յատուկ
անուններ, ածանցներ մերթ դժիկով մերթ

առանց դժիկի, ներքին ենթավերնագրերի
բացակայութիւն եւ այլն, որոնք դժուա-
րացնում են գրքի ընթերցումը : Էջերով
ամբողջ բառացանկեր են տրուած (եբրեմն
խախտուած այբբենական կարգով) փոխա-
նակ սիւնակների, մանաւանդ երբ նոյն տա-
ռատեսակով են դրանք եւ հեղինակը խօսքը :
Գրաչարները չհաշուած, հեղինակից բացի
գրքի վրայ ութ հոգի են աշխատել :

Մատենագիտական ցանկի բացակայութիւն

Այս կամ «օգտագործուած գրականու-
թեան» ցանկը կարելի է զանց առնել «գիտա-
մասսայական» դրբոյկներում, բայց ոչ՝ գի-
տական աշխատութիւնների վերջում, ինչպի-
սին է այս մէկը, ուր ոչ մի դրացուցակ չկայ,
մինչդեռ ընթերցանութիւնը ցոյց է տալիս,
որ հեղինակը օգտուել է բառարաններից եւ
աշխատութիւններից, սրանցից լուռ վերցնե-
լով մտքեր ու տեղեկութիւններ : Գրքի էջա-
տակերում յիշատակուած են լոկ մի քանի
գործեր : Նախ պիտի իմանայինք, թէ Ս. Գրքի
ո՛ր հրատարակութիւններն է օգտագործել՝
ՍԳ 1805 (Յովհ. Չոհրապետի հրատ.),
ՍԳ 1860 (Ար. Բագրատունու հրատ.), կամ
ՍԳ 1895 (Մատ. Գարագաշեանի հրատ. բո-
ղոքական եկեղեցու կանոնով). գործածել է
անշուշտ Համարաբարտ հիմ եւ նոր կտակա-
բանաց հսկայական տեղեկատուն, Երուսա-
ղէմ, 1895, Ար. Այտնեանի, Հր. Աճառեանի
եւ ուրիշների թանկագին աշխատութիւննե-
րը, սակայն առանց հեղինակի կամ գրքի
անունը տալու, կամ լոկ գրելով՝ այսինչն
ասում է, մէկ անգամ՝ ըստ այսինչի, սակայն
դարձեալ առանց աշխատութեան վերնագրի
եւ ստոյգ տեղի : Այսպիսով այն տպաւորու-
թիւնն է ստացւում, որ խարուսիկ է, թէ
հեղինակն ամենազէտ է, ոչ միայն գրաբա-
րագէտ, այլեւ յունագէտ, եբրայագէտ ու
ասորագէտ, մինչդեռ նրան անձնապէս եր-
կար ժամանակ ճանաչած լինելով՝ կարող
ենք ասել, որ վերջին երեք լեզուները նրան
ծանօթ չեն, եւ նրա բոլոր տեղեկութիւնները
քաղուածոյ են, սակայն լռելեայն. ահա
անօրինականը եւ վատ օրինակը : Ընթերցողն
իրաւունք ունի ստուգելու նրա արտայայտած

մտքերի եւ փաստերի ճշտութիւնը (նա բազմիցս սխալուել է եւ վստահութիւն չի ներշնչում), բացառութեամբ Արուսեանի շրջանի Կոտայք գիւղի իր մայրենի խօսուածքի յաճախակի փաստերի, որոնք ոչ մի գրքում չկան:

Հեղինակը կրկնել է Համարաբառի սըխալները. սակայն, բացի դրանից, այս խիստ թերի տեղեկատուի հիման վրայ կազմել է բառերի յաճախականութեան գումարները, որոնք, այսպիսով, ստոյգ չեն, այլ՝ մօտաւոր, իսկ որոշ բառեր միանգամայն մոռացուել են. ինչպէս ստուգուում է, Համարաբառում մոռացուած բառերի մի մասը քաղուած է Նոր քաղաքի հայկազեան լեզուի (ՆՀԲ) բառարանից: Որպէս սկզբունք՝ հեղինակը չի նշել Գրքից բերուած բառերի եւ նախադասութիւնների տեղերը, նշուածներն էլ բացառութիւններ են եւ երբեմն սխալաւոր, մինչդեռ աղբիւրները շատ են կարելու եւ կարող են օգտակար լինել ուրիշների: Հեղինակի ուսումնասիրութեան եղանակից գաղտնապահութիւն է վազում. կարծես նա կողմնակից է «Վարդապետն ասաց»-ին:

Ընթերցողը շուտով համազուում է, որ հեղինակը չի յարգել գիտական, լեզուաբանասիրական աշխատութիւն գրելու տարրական եւ գեղագիտական հիմունքները, այսպիսով վատ օրինակ տալով երիտասարդներին եւ ինքնաբաւութիւն ցուցաբերելով:

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Ցանկալի էր, որ ներածութեան մէջ (55 էջ) քննարկուած բազմաթիւ հարցերին տրուէին ենթավերնադրեր, որոնք որոշակի ցոյց տուած կը լինէին կարեւորը:

Մի քանի մտքեր յատկապէս գրաւեցին մեր ուշադրութիւնը, եւ ընդգծեցինք:

1. Հեղինակը հայերէն գրերի գիւտի թուականը համարում է, ըստ Կորիւնի, 404-ը: Մաշտոցը «Գրքի գիւտից յետոյ անմիջապէս ձեռնարկեց Աստուածաշնչի քարգմանութիւնը, որը կատարուեց ասորերէնից» (էջ 5, 212 եւ այլն), ընդհանուր տեղի, որ շատերն են կրկնում: Սակայն Կորիւնն այս մասին որոշակի տեղեկութիւն չունի. Մաշտոցը թէեւ ասորախօս Եգեսիայում հնարեց հայերէն գրերը, բայց յունախօս Սամոսա-

տում է վերջնականապէս ձեւաւորել «հելլենական դպրութեան գրագիր» (Կորիւն) Հռոփանոսի հետ եւ այնտեղ իսկ, այդ յունախօս քաղաքում, անպայման յունարէնից «Սկսեց թարգմանել [սուրբ] գիրքը՝ նախ Սողոմոնի Առակներէն»¹: Կորիւնը հասկացնել է տալիս, որ յետագայում ամբողջ Հին եւ Նոր կտակարանը Հայաստանում հայերէնի է թարգմանուել, սակայն առանց որոշակի ասելու՝ յունարէնից, թէ՞ ասորերէնից²: Այս հարցը հաւանաբար տրուեց Մաշտոցին, երբ նա կայսրին ներկայացաւ Արեւմտեան Հայաստանում մայրենի լեզուի ուսուցման թոյլտուութիւն հայցելու համար³. միթէ յունարէնի ընտրութիւնը աւելի պատշաճ չէ՞ր այս նպատակի բաւարարութեան համար: Ըստ Կորիւնի՝ նա ձեռք է բերում եկեղեցու Հայրերի յունարէն գործեր⁴. անկարելի՞ էր արդեօք յունարէն Ս. Գիրք էլ ճարել եւ բերել Հայաստան: Չենք ուզում այս անպացուցելի խնդրի մասին շարունակել: Ի՞նչ էլ լինի, միակ ստոյգ տեղեկատու մեզ համար Կորիւնն է, եւ ոչ թէ յետագայ որեւէ պատմագիր:

2. «Եօթանասնից քարգմանութիւնը (յունարէն) տեւել է 150 տարի. այդ քարգմանութիւնը կատարուել է ընդհատումներով եւ ունի քարգմախ աննշտութիւններ» (էջ 6), իսկ թարգմանիչները համարուել են յոյն՝ «Յոյն քարգմանիչները չհասկանալով...» (էջ 220): Այս մտքերն իհարկէ հեղինակի ուսումնասիրութեան արդիւնքը չեն, իսկ աղբիւրը չի նշուել: Յամենայն դէպս Եօթանասնից կոչուած յունարէն թարգմանութեան պատմութիւնը շատ աւելի բարդ է, քան պատկերացնում է հեղինակը. ըստ մեր ունեցած մի աղբիւրի՝ թարգմանութիւնը կամ թարգմանութիւնները կատարուել են ն. ք. Ք. 250—150 թթ.⁵, յունախօս հրեաների կողմից, իսկ, «բազմաթիւ անճշտութիւններով» մասին խօսելը կամ հեղինակի հետեւեալ միտքը՝ «Բոլոր հին քարգմանութիւնների սրբագրութիւնները վեր են հա-

¹ Կորիւն, վարք Մաշտոցի, Երեւան, 1941, էջ 51 (Մանուկ Աբեղյանի հրատարակութիւն եւ թարգմանութիւն):
² Անդ, էջ 56-57:
³ Անդ, էջ 66-68:
⁴ Անդ, էջ 69-70:
⁵ Xavier Léon-Dufour, Dictionnaire du Nouveau testament, Paris, 1975, «Septante».

նում քարգմախի սխալներ, վրիպումներ, աննշտութիւններ» (էջ 6), նրան ենթադրել են տալիս երրայերէն մի բնագիր, որ իրականում դեռ կանոնի չէր վերածուել իբրեւ հիմք ծառայելու համար. երրայերէն բնագրերը ենթարկուել են խճրագրումների. ուստի մասնագէտները երբեք հիմք չեն ընդունում գիտութեանը յայտնի երրայերէն բնագիրը: Իսկ հայերէն հին թարգմանութեան մասին հեղինակը գրել է. «Հայերէն Աստուածաշնչի համեմատութիւնները երբայակաւ եւ յունական բնագրերի հետ քաջայայտում են աւելի քան երբեք տասնեակ հազար զանազանութիւններ, վրիպումներ, քերականութիւններ եւ այլն» (էջ 6). պիտի ուզէինք իմանալ այդ ահռելի համեմատութեան արժանաւոր հեղինակի կամ հեղինակների անունը եւ աշխատելու ձեւը, նոյնիսկ երբայերէն բնագրի հետ բաղդատութեան արդիւնքը, որի հետ դործ չունի հայերէն թարգմանութիւնը, որ ասորերէնից կամ յունարէնից եւ կամ երկուսից է կատարուել, քանի որ, փաստուած է, մեր երանելի թարգմանիչները չեն տիրապետել երբայերէնին:

3. «Աստուածաշնչի քարգմախ քարգմանութիւններ սկսում են Սաղմոսներից» (էջ 6). հաւանաբար աղբիւրն է Գար. Զարբհանալեան, Մատենադարան հայկական քարգմանութեանց, 1889, էջ 216, որ մէջ է բերել Ս. Վ. Պարոնեանի միտքը: Յամենայն դէպս Մաշտոցն Առակներից սկսեց իր փորձը. տե՛ս անդ նաեւ:

4. «Այսօր նոյնիսկ գարմանալ պէտք է, թէ ինչպե՞ս են երկնային մարմինների անունները մեր քարգմանիչները հայացրել» (էջ 11). ո՞վ կարող է ասել, որ այդ անուններն արդէն դոյուլթիւն չունէին հայերէնում. եթէ միայն թարգմանիչներն էին հասկանում այդ անունները, սպա ո՞ւր մնաց, որ «Աստուածաշունչը թարգմանուում էր ժողովրդի համար» (էջ 10): Նոյնը վերաբերում է նաեւ հեղինակի զարմանքը շարժած կենդանական եւ բուսական անունների հայերէն թարգմանութիւններին:

5. «Դժուար գործ է եղել քարգմանիչների համար նաեւ ոգիների եւ այլ աստուածութիւնների անունները հայացնել» (էջ 11). ի տարբերութիւն յուշկապարիկ, միւսապ, վահագն, վանատուր ճիշտ օրինակների՝ միանգամայն անտեղի են հետեւեալները

(առանց աղբիւրի). գէտ եւ իզձ (Դան Բ 2 «Ոչ է իմաստնոց եւ մոգուց եւ գիտաց եւ ըզձից պատմել առաջի արքայի»), վիուկ, հաւահմայ «եւ շատ ուրիշ հայացումներ, ինչպէս գետնակոչ... հրաշաքետ (փիս հրաշաքետ ՄՄ.) կամ կիւսահմայ, նեռն», որոնք ողբիների կամ աստուածութիւնների անուններ չեն. իսկ օրնումամսիսա-ը, որի աղբիւրը նշուած չէ, եւ ոչ մի տեղ չգտանք, հայերէն չէ, եթէ վրիպակ չէ:

6. «Հայերէն աստուածաշնչում հայացուած ենք գտնում երբայակաւ բնագրի տեղանունները» (էջ 12). հեղինակը յաճախ մեկնակէտ է ընդունում երբայակաւ բնագիրը, մինչդեռ յայտնի է, որ հայերէն թարգմանութիւնը դրանից ուղղակի չի կատարուել. օրինակներից է (առանց աղբիւրի) Բերաքէտ՝ Ջրհար Երզնան (ՄՆ. ԻԱ 31-32). արդ՝ Եօթանասնից-ում արդէն թարգմանուել է յունարէն, որից եւ՝ հայերէն: Հեղինակն այս եւ նման փաստերը լուռ քաղում է ՍԳ 1895-ից կամ ՆՀԲ-ից. առաջինի էջատակերում նշուած են երբայակաւ բնագրի ընթերցումներից շատերը գրաբար թարգմանութեամբ, իսկ երկրորդում երբայերէն բառեր նշուած են հայերէն տառերով:

7. «Հայերէնը երբեմն ընդարձակում է բնագրի արտայայտութիւնը, դարձնում է պատկերաւոր» (էջ 13). սա, եթէ ճիշտ լինէր, մեղանշում կը լինէր մեր թարգմանիչների հաւատարիմ թարգմանութեան սկզբունքի դէմ, թարգմանական ճամբարութեան դէմ, որ այնքան դժուար է հեղինակը: Հոմանիչների խճոզում եւ բնագրից հեռացում նկատուում են Մակարայեցիների գրքերում, որոնք, անշուշտ, ենթակայ չեն եղել Մահակ կաթողիկոսի խիստ խճրագրութեան: Մակայն այստեղ հեղինակի բերած վկայութիւնը, շնորհիւ ՍԳ 1895-ի, ուր էջակատում նշուած են նաեւ Եօթանասնից բնագրի այլ ընթերցումները գրաբար թարգմանութեամբ, ոչ դասական թարգմանութիւն Յայտնութիւն-ից է, եւ սա վերջին անգամը չէ. այլուր նա էլ գրում է, թէ սա «Ուշ շրջանի թարգմանութիւն է համարուում» (էջ 50). ոչ միայն «համարուում է», այլ իրօք այդպիսին է (խօսքը տպագրի մասին է, կայ հնագոյն թարգմանութիւնը Ֆր. Մուրատի հրատարակութեամբ): — Հեղինակի երկրորդ օրինակն է՝ «Յունարէն՝ նախանձեցուցից գմարմին իմ

940-86

անորոշ նախադասութիւնը հայերէնում դարձել է՝ նախանձ արկից նոցա մարմնով իմով (Հռովմ. ԺԱ, 11)»։ տան համարն իրականում 14 է, իսկ աղբիւրը ՍԳ 1895-ն է, 11-ում էլ ունենք հայ. «զի նախանձ արկցէ նոցա»։ բայց յայտնի չէ, թէ ինչո՞վ է «պատկերաւոր» հայ. նախադասութիւնը յուն. նախանձեցուցից պատճառականի փոխարէն նախանձ արկանել դարձուածքի գործածութեամբ, որի ուղիղ խնդիրը ՍԳ-ում անձ նշանակող կամ դրան փոխարինող դերանուն է, որպիսին չէ մարմինը։ Բոլոր դէպքերում պիտի յիշենք, որ հայերէն թարգմանութեան հիմք յունարէն թարգմանութիւնը կամ բընազիրը յատկօրէն յայտնի չէ։ Այս դէպքում պէտք է քննել, թէ հայ. թարգմանութիւնը որքանով է համապատասխանում յուն. բնագրին. սրա «ղմարմին իմ»-ը արդի թարգմանութիւնների մէջ հասկացուել է «մարմնակիցներ, մարմնով ազգակիցներ»։ ուստի գուցէ հայերէնն էր՝ «Զի թերեւս նախանձ արկից նոցա, [որք] մարմնով իմով», այսինքն «որք են մարմնով իմով», քանի որ բուն իմաստը «իմ մարմնով նախանձ շարժեմ» չէ։ — Հեղինակի երրորդ օրինակն է՝ «Յունարէնը՝ ի վերստին ծննդեանն, հայերէնում՝ ի միւսանդամ գալստեանն» (էջ 13), որի չնչուած աղբիւրն է Մտթ. ԺԹ 28, եւ իրականում առանց -ն յօդի։ Արդի թարգմանութիւնները հետեւում են յունարէնին եւ ըստ այնմ մեկնաբանում. ուստի պէտք է որոնել, թէ ինչո՞ւ յուն. ծնունդ բառի փոխ. հայ. ունենք գալուստ, որը ոչ «ընդարձակում է բնազրի արտայայտութիւնը» եւ ոչ էլ «դարձնում պատկերաւոր»։ Չմոռանանք նաեւ, որ հայ. Աստուածաշնչի քննական հրատարակութիւն չունենք եւ մեր ամբողջ ուսումնասիրութիւնները հիմնում ենք արդի սպաղիբների մէկի կամ միւսի վրայ, մինչդեռ դրանք թերութիւններ ունեն։

8. «Յունարէնում բազմաթիւ նախադասութիւններ պակասում են. հայերէնը աւելացնում է կամ աւելի հասկանալի դարձնելու եւ կամ լրացնում է» (այսպէս, էջ 13). Ժրծազելի է «պակասում է յունարէնում» դիտողութիւնը. կարծես թէ սա է, որ թարգմանուել է հայերէնից։ Իսկ յուն. բնազիրը «լրացնելու» մասին խօսք չի կարող լինել, քանի որ թարգմանողը սրբազան գիրք էր։ Կարելի է ընդունել հայերէնը «աւելի հասկանալի դարձնելու» համար աւելացուած

անմեղ բառերը, ինչպէս «եւ ասել» հեղինակի նշած օրինակում (Մարկ. ԺԲ, 1). նա այս նշել է ըստ ՍԳ 1895-ի, սակայն եթէ խորապէս ուսումնասիրած լինէր հայ. թարգմանութեան մէջ կատարուած յաւելումները, ապա պիտի նկատէր, որ ասել բայը (եւ -ով) ուրիշ տեղերում էլ աւելացուել է որոշ յարադիր բայերից կամ դարձուածքներից՝ յետոյ, տեղեր, որոնք ամբողջութեամբ նշուած չեն ՍԳ 1895-ում. կան՝ «Աղաղակէին եւ ասելին» (Մրկ. ԺԱ, 9), «Երգնուլ եւ ասել» (Մրկ. ԺԳ, 1), «Ողջոյն տալ եւ ասել» (Մրկ. ԺԵ, 18) եւ այլն։ Ասել-ի յաւելման համար հեղինակը պատճառաբանում է, թէ «որովհետեւ միայն այդպէս է ուրիշի ուղղակի խօսքը կապակցուում հեղինակի խօսքի հետ» (էջ 13). սակայն ահա օրինակ, որ այդպիսին չէ. «Նա առաւել եւս աղաղակէր՝ Որդի՛ Դաւթի, ողորմեա՛ց ինձ» (Մրկ. Ժ, 48) կամ «Եւ նոքա դարձեալ աղաղակէին, յուզեալք ի քահանայապետիցն, ի խա՛չ հան զդա... Եւ նոքա առաւել եւս աղաղակէին եւ ասելին՝ ի խա՛չ հան զդա» (Մրկ. ԺԵ, 13-14)։ Հեղինակին շփոթութեան մէջ է գցել երեւի ՍԳ 1895-ի «Ի Յունին պակասէ» դիտողական բայը։ Նա բերել է նաեւ այլ օրինակներ, որոնցում հայ. մի բառի յաւելման պատճառները նրա նշածները չեն անշուշտ եւ կարօտ են հետազօտման. նրա հակադրական պնդումն է նաեւ, թէ «Այսպիսի փոփոխութիւնները դրքի անորոշութիւնները դարձնում էին պարզ ու մեկին, խօսքին տալիս էին հայացի կերպարանք եւ օժտում էին որոշ պատկերաւորութեամբ ու արտայայտութեամբ» (էջ 13)։ Նա «հայացման նպատակադրումների» վկայութիւն է բերում նաեւ «յերկտասաներորդ ամսեանն Աղար, որ է հայերէն Արեղ» (Եսթ. Բ, 16)»։ ամենայն հաւանականութեամբ Աղար-ից յետոյ դրուած բառերը նախապէս եղել են լուսանցադրութիւն եւ ապա անցել բնազրի մէջ, բայց անտարակոյս յուն. բնազրի մաս չեն կազմում. յուն. ձեռագրեր ունեն «որ է Աղար» (կամ Աղոր, այսինքն 12-րդ ամիս) եւ «որ է Տերեր» (այսինքն 10-րդ ամիս). ուրեմն խնդիրն այնքան էլ պարզ չէ։

9. «Աստուածաշունչը հրեական ու յունական բնագրերից վերածուեց հայկական բնագրի, որ գարմացրեց աշխարհառշակ աստուածաշնչագէտներին իր քարգմանական արուեստով ու ինքնուրոյնութեամբ եւ կո-

չուեց «Դիտոյ համօրէն քարգմանութեանց Սուրբ Գրոց» (էջ 13-14). հեղինակը ոչ մի փաստ չունի «հրեական» բնազրից թարգմանուելու վերաբերեալ եւ քանիցս կրկնել է միայն յունարէն բնազիր-հիմքը։ Այդ «աշխարհահռչակ աստուածաշնչագէտները» միայն Լա Կրոզն է, որ մէջբերուած՝ զնահատումը (ըստ Գար. Չարբհանաւեանի նշուած աշխատութեան, էջ 113, առանց աղբիւրի նշման մեր հեղինակի կողմից) արտայայտել է իր նամակներից մէկում⁶։

10. «Մեր պատմիչները իրենց գրքերը Աստուածաշնչի ընդօրինակութեամբ սկսում են Աշտարակաշինութիւնից, նոյից ու նրա որդիներից...» (էջ 14). նախ՝ Աստուածաշունչը նշուած դրուարներով չի բացուում, եւ երկրորդ՝ «մեր պատմիչները», որոշեալ առումով, դրանցով չեն սկսում իրենց գրքերը. ոչ մէկի անունը չի տրուել, բայց կայ այդպիսին. կարելի էր գրել՝ առանց ընդհանրացնելու։

11. «Ահա յարադրական բարդութիւնների մի փունջ» (էջ 20), երեք քառորդ էջանոց մի փունջ, որ բոլորովին աւելորդ է, քանի որ յատուկ բաժին է յատկացուած բառապաշարին, ըստ որում եւ յարադիրներին. նման «փնջեր» կան նաեւ ներածութեան էջ 20-24-ում՝ բառերի եւ ածանցների. սըրանք եւս աւելորդ են որպէս նախաձաշակ, քանի որ երկարօրէն քննարկուած են յետոյ ցանկերի կրկնութեամբ։

12. «Աստուածաշունչը մեզ աւանդել է անյօդակապ բարդութիւնների ամէն տեսակները, որոնց ծագումը գաւառական ու ժողովրդախօսակցական է» (էջ 20), ու բերում են ութ տող օրինակներ, որոնք աշխատութեան երկրորդ մասում էլ են։ Հեղինակն այլ առիթներով էլ բառեր է յատկացնում այս երկու ծագումներին, որոնք, բնական է, ոչ ոքի չեն կարող յայտնի լինել։ Անտուան Մեյէ Փրանսիացի հայագէտն իր «Հայերէնի բառարարդման մասին» յօդուածում այսպիսի ժողովրդասէր մտքեր չունի այս բառերի վերաբերեալ⁷։ Հեղինակը «ժողովրդախօսակ-

ցական լեզուից կամ բարբառներից» է համարում նաեւ կրկնաւոր բարդութիւնները (էջ 21) եւ փոքրացուցիչ կամ -տի, -որայ, -եան, -եար մասնիկներ ունեցող ածանցաւոր բառերը (էջ 24). դարձեալ անապացուցելի։

13. «Մեր գրական լեզուի ծագման շրջանի համար ու շաղկապը նոյնպէս համարուել է ժողովրդախօսակցական լեզուի գրական լեզուն քափանցելու վկաններից մէկը» (էջ 21), եւ օրինակներից է պատուհանը։ Հեղինակը հաւանաբար նկատի ունի Ար. Այտընեանի տեսակէտը, որ արդէն դասական գրաբարում «ռամկօրէնի» տարրեր էր տեսնում, որոնք, իբր, ներթափանցել են գրականութեան մէջ. Նորայր Ն. Բիւզանդացին այս կարծիքին չի եղել եւ այս տեսակէտը հերքել է իր անտիպ մնացած «Տեսութիւն Գննական քերականութեան Հ. Արսենի Այտընեան» աշխատութեան մէջ (գիւտան, 8:0, 6:18, միայն 145 էջ պահպանուած)։ Արմ-ը բնիկ հայերէն բառ համարելով ու-ն՝ վերապահ է բարդութիւնների -ու-ի հանդէպ. «Բայց այս եւ նման ձեւերը կարող են յետին ներմուծութիւններ լինել։ Աւելի յաճախ գտնում ենք բարդութեանց մէջ եւ ածանցմանց մէջ՝ որոնք նուազ կասկածելի են»⁸։ Պատուհանը որոշակի ստուգաբանութիւն չի ստացել։

14. «V դարի գրական լեզուի համար հնչիւնական խորք երեւոյթներ նոյնպէս տեղ են գտել Աստուածաշնչում, որոնք համարուում են դարձեալ գաւառական ձեւեր» (էջ 24-25). վարձական փոխ. վարձական, վարձուոր (վարձաւոր), զինուոր (զինաւոր), գոնէ/գոնեայ («Մեր խօսուածքում (Ա. Արովեանի չրջան, Կոտայք) պահպանուած է գոնեա ձեւով») (էջ 25)։ Դարձեալ անապացուցելի միտք. գոնէ զինուոր բառի մէջ -ա- յօդակապի բացակայութիւնն այս ձեւով չի բացատրուել Ա. Մեյէի մեր նշած յօդուածում։

15. «Լաւագոյն Չալքիսեան-Այտընեանի ֆերականութիւնը կազմուած է յատկապէս Աստուածաշնչի ֆերականութեան ընձեռած օրինակներով... Թուում է, թէ այդ եւ նման ֆերականութիւնները պէտք է որ լրիւ սպառուած ու մեր ֆերականագիտութեանը մատու-

⁶ La Croze, Thesauri epistolici Lacroziani, 1742-1746.

⁷ Անտուան Մեյէ, Հայագիտական ուսումնասիրութիւններ, Երեւան, 1978 (կազմող եւ թարգմանիչ՝ Մարտիրոս Մինասեան), էջ 85-107։ Սա այն հազվագէտ գրքերից է, որ հեղինակը նշել է մէջբերում կատարելիս (էջ 215)։

⁸ Հր. Աճառեան, Հայերէն արմատական բառաբան, ՈՒ բառայօդուած։

ցած լինելին Աստուածաշնչի ֆերականական բույր իւրայատուկութիւնները» եւ այլն (էջ 25) : Այդ քերականութիւնը վերնադիր ունի՝ Քերականութիւն հայկագնեան լեզուի (Վիեննա, 1885, այսուհետեւ՝ Չալ) : Սա Աստուածաշնչի գրաբարի քերականութիւնը չէ եւ չի կարող լինել, քանի որ այդպիսին գոյութիւն չունի, այլ կայ միայն դասական գրաբարի քերականութիւն, որովհետեւ Գրքի քերականութիւնը չի տարբերում դասական միւս գործերի քերականութիւնից, կամ, աւելի ճիշտ, ընդհակառակը առաջնութեան կարգով : Այդ Քերականութիւնը բաղաձայն օրինակներ ունի նաեւ այլ դասական գրուածքներից ու թարգմանութիւններից : Դժբախտաբար «նման քերականութիւններ» չկան, դա միակն է, որ դասական գրաբարն է ուսուցում եւ էջատակում զդուշացնում յետին ձեւերից, առանց, սակայն, նիւթն սպառած լինելու յաւակնութեան, քանի որ դասագիրք է եղել իր ժամանակին, ինչպէս ասուած է յառաջաբանում եւ ներսում⁹ :

16. Ի տուէն «Քերականութիւնները սովորեցնում են իբրեւ ներգոյականի ձեւ միայն ի տուէ եւ ի գիշերի կայուն կապակցութեան մէջ» (էջ 25), իսկ նախորդ տողում՝ «Քերականութիւնները իբրեւ ներգոյականի ձեւ տալիս են միայն ի տուընջեան, որ Աստուածաշնչում ի տուէ ձեւի հետ համեմատած շատ սակաւ է» : Համեմատութեան արդիւնքը ճիշտ է, ինչպէս եւ այն, որ Չալ-ն սովորեցնում է էջ 27-ում՝ ներգոյական ի տուընջեան, բայց էջ 154-ում որպէս ժամանակի մակրայ նշուած է ի տուէ, ինչպէս եւ ի տուէ եւ ի գիշերի. իսկ Ա. Մեյէն իր գերմ. ձեռնարկում, էջ 58՝ «Ներգոյականն ամենից յաճախ (ի) տուէ է, երբեմն՝ (ի) տուընջեան», եւ Esquisse-ում, էջ 85՝ «Տիւ-ի տուընջեան սեռականի, ինչպէս եւ ի տուէ ներգոյականի տեսակի բացատրութիւնը յայտնի չէ»¹⁰ : Ուստի պէտք է որոշել՝ ո՞ր քերականութիւնները ի դէպ, հեղինակն իր Գրաբարի հոլովումը եւ խոնարհումը համառօտ դասընթացում գրել է՝ «Ներգ. ի տուընջեան» (էջ 28) : Քննարկուող աշխատութեան մէջ գրել է, թէ ի տուէն «Նշանակում է,

որ է-ն եղել է նաեւ ներգոյականի վերջաւորութիւն», որպիսի կարծիք չունի Գ. Չահուկեանը¹¹. սակայն տատանուելով՝ ասել է նաեւ էջ 44-ում. «Հին բացառականը՝ ի տուէ ներգոյականի աւելի ճիշտ մակրայի նշանակութիւն ունի». տե՛ս Չալ, էջ 154 :

17. «Ինչն դասական ձեւն է գեօղ, որ 46 անգամ նոյնութեամբ յիշատակուած է» (էջ 26) : «Դասական» ածականի գործածութիւնը խիստ զարմանալի է հեղինակի գրչի տակ, քանի որ նա ընդունում է միայն հինգերորդ դարի գրաբարի գոյութիւնը¹² : Պէտք է ճշտել. դասական ձեւն է գեօղ, օ տառի փոխարէն. աւ. դժբախտաբար օ-ն մտել է նաեւ Աստուածաշնչի հրատարակութիւնների մէջ, սակայն դասական գրաբար ընդունողը պէտք է ամենուրեք վերականգնէր դասական ուղղագրութիւնը եւ ըստ այնմ խօսէր բառերի եւ ածանցների դասական ուղղագրութեան մասին : Գանք բուն բառին. գեօղ ձեւը (որի գործածութեան քանակն ըստ անստոյգ Համարարարի է) ՍԳ 1895-ում է, իսկ ՍԳ 1860-ն ունի գեղ, գեղս, եւ բառի ստուգաբանութիւնը յայտնի չէ (ըստ Արմ-ի)¹³ :

18. «Արկանեմ բայը քերականութիւնների մէջ եւ այլուր յիշատակուած է իբրեւ կանոնաւոր ներգործական բայ արկի, արկեր, արկ, արկաք, արկիք, արկիմ. մինչդեռ Աստուածաշնչում այս ներգործական ձեւերի հետ միեւնոյն ներգործական իմաստի համար ունի նաեւ արկար, արկաւ, արկան, օրինակները» (էջ 26) . Չալ-ի մասին քննադատական խօսքից յետոյ հեղինակը գրել էր էջ 25-ում. «Սակայն հետազոտութիւնը վեր է հանում քերականական այնպիսի ձեւեր, որոնք ծանօթ չեն մեզ» Աստուածաշնչում. եւ ահա գեօղ-ի հետ այս արկար, արկաւ, արկան «օրինակները» հեղինակի դիտարկից են : Վերջինս մի ահաւոր թիւրիմացութիւն է հեղինակի պէս մի գրաբարագէտի համար. ՆՀԲ-ն ունի արկանիմ հասարակ սեռի բայը, ուր հեղինակը կարող էր ուրիշ «օրինակներ» էլ գտնել : Նրա քննադատած Չալ-ն էջ 240-ի Ե կանոնի տակ գրել է. «Հայցական սեռի խնդրով կրաւորական ձեւ կը դրուին այն

⁹ Նրա ոգով է գրուած, բայց շատ աւելի համառօտ է A. Meillet, *Altarmenisches Elementarbuch* ձեռնարկը, 1913 եւ 1981 :
¹⁰ A. Meillet, *Esquisse d'une grammaire comparée de l'arménien classique*, Vienne, 1936 (2^e éd.).

¹¹ Գ. Չահուկեան, Հին հայերէնի հոլովումն սիւտիւմը եւ նրա ծագումը, Երեւան, 1959, էջ 194-195 :
¹² Վ. Առաքելեան, Ակնարկներ հայոց գրական լեզուի պատմութեան, Երեւան, 1981 :
¹³ A. Meillet, *Esquisse*, էջ 85. գերմ. ձեռնարկ, էջ 60՝ «Գեղ (գրուած նաեւ գեաղ կամ գիւղ)» :

գործողութեանց բայերը՝ գորոնք մարդ ինք իր վրայ կը կատարէ» . վկայութիւններից են նաեւ՝ «Արկաւ Պետրոս զիւրեւ գովածանիմ եւ ընկէց զինքն ի ծով» (որ հեղինակն էլ է բերել¹⁴), «Արկաւ զիւրեւ (կամ զանձամբ)», «Արկաւ խեղդ եւ մեռաւ» . այս գործածութիւնը նման է Փրանսերէնի անդրադարձ բայերին, որոնք յատկապէս բաղադրեալ ժամանակներում կրաւորական սեռի օժանդակ բայն ունեն, բայց ուղիղ խնդիր են ստանում, եթէ ներգործական սեռի են : Գրաբարում նկատելի է, որ արկանիմ բայն ուղիղ խնդրից բացի յաճախ ունենում է զ- նախդրով գործիական դրուած խնդիր : Այս երեւոյթը միայն արկանեմ ներգործականին յատուկ չէ. Չալ-ի օրինակներից է նաեւ «Բաժանեցան զհանդերձս իմ յիւրեանս», «Եղաւ թաղ զԱսիացոց» եւ այլն : — Համաձայն ենք հեղինակի հետ. «Մանրախնդիր հետազոտութիւնները, մանաւանդ հնաւանդ պատմաբաններում եւ անվաւերական ու նախնական թարգմանութիւնների մէջ կարող են հետաքրքրական եւ անծանօթ ձեւեր յայտնաբերուել» (էջ 26, կարգա՝ «յայտնաբերել»), բայց ոչ արկանեմ բայի ձեւերի պէս :

19. «Աստուածաշնչում ունի չափածոյ գրքեր. դրանք են Յովք-ը ... Մարգարէութիւնք-ը, Ողբք Երեմիայ եւ այլն» (էջ 27) . Մարգարէութիւնք-ը ՍԳ-ի առանձին գրքերից չէ, այլ կան 12 մարգարէների առանձին գրքերը, որոնցից, սակայն, ոչ մէկը չափածոյ չէ. հեղինակն արդեօ՞ք սխալ չի հասկացել հետեւեալի նման մի միտք. «Գիտել արժան է սակայն զի բուն կանոնական գիրք, որպիսի են, ըստ եկեղեցական աւանդութեան, Հնդեմատեանն ... ստիւքեքոմքն Յոր, Սաղմոսք, Գիրք Առակաց, Ժողովողի եւ Երգոց երգոյն, Մարգարէք, Նեէմի, Եզրաս, Եսթեր ... »¹⁵, ուր մեր ընդգծած բառը վերաբերում է Յոր-ից մինչեւ Երգոց երգոյն, որն իզուր չէ միացած եւ-ով :

20. «Միայն փոքրիկ երգ երգոցի մէջ մեր լեզուն համեմատութիւնների բազմազան այնպիսի ձեւեր է հանդէս բերել, որոնցից

շատերը կենդանի ու գործուն են առ այսօր» (էջ 31) . բաղադրութեան հարցին նուիրուած է էջ ու կէս, սակայն պիտի ասենք, որ «մեր լեզուն» պարզապէս թարգմանել է յունարէն բնագրի ձեւերը : Օրինակներից է նաեւ «Քանզի դեղեցկացան ստինք քո, քոյր իմ հարսն, քանզի դեղեցկացան ստինք քո ի դինուոյ ... քան զամենայն խունկս (Դ, 10)» . հեղինակն այլուր փորձել է բնագրային սրբագրութիւններ առաջարկել. արդ՝ մեր ընդգծած քանզի-ն սրբագրելի է քանի՞, ինչպ. «Քանի՞ ընդարձակ է դուռնն ... Քանի՞ անձուկ է դուռնն» (Մտթ. է, 13-14) . ըստ ՍԳ 1895-ի՝ այստեղ հայ. որոշ ձեռագրեր ունեն քանզի :

21. Աստուածաշնչում «է, որ առաջին անգամ սէրը դառնում է սիրած ... ձախ-ը՝ ձախ ձեռք, ալ-ը՝ ալ ձեռք, Կարմիր որդն-ը՝ որդան կարմիր» (էջ 33) . ինչպէ՞ս կարելի է պնդել այսպիսի բաներ, երբ նախագրային հայերէնի բառապաշարը յայտնի չէ. իսկ Հայաստանում աւանդաբար արտադրուող որդան կարմիր-ի մասին խօսք չի կարող լինել. հեղինակը երբեմն մոռանում է կարծէք, որ Աստուածաշնչում թարգմանուել է ժողովրդի լեզուով, ժողովրդի համար :

22. «Նոյնիսկ կան բառեր, որոնք միայն իրենց համանիշի հետ են կիրառուում. օրինակ՝ հաչել բայը միշտ հառաչել բային կից է գործածուում» (էջ 35), առանց որեւէ օրինակի. նշենք՝ «Քահանայք նորա հաչեն՝ հառաչեն եւ յողոց հանեն» (Ողբ Ա, 4), ըստ ՍԳ 1860-ի, իսկ ըստ ՍԳ 1895-ի՝ «Քահանայք նորա հաչեն հառաչեն եւ յողոց հանեն», թէեւ երբ. եւ յուն. բնագրերը՝ լոկ «յողոց հանեն» : Հեղինակի դրոյթն ինքնին բացարձակ չէ :

23. «Չոր արար ընդ իս բարձեալն (Դան. գ, 99)» (էջ 35) . հեղինակը սխալ է ընդօրինակել մեր ընդգծածը, որ կրկնել է էջ 96-ում (ն. տ. 3), փոխանակ բարձեալ՝ Աստուծոյ յատկանիշներից մէկը որպէս նրա անուան փոխարինող : Կարծում ենք, սոսկական եւ պատահական վրիպակ չէ :

24. Հոմանիշ, հեղինակի բառով՝ համանիշ, բառերից «Իւրաքանչիւրն իր դերն ու նշանակութիւնը ունի եւ օժտում է նախադասութիւնը որեւէ շնորհով» (էջ 34) . բերուել է նաեւ «Ձթաղամասաւորն եւ զմայեալն եւ

¹⁴ Հեղինակը նշել է նաեւ Սաղմ. Գ 2, որի Գ-ն պիտի լինի ճԳ : Վրիպակները շատ են աշխատութեան մէջ :
¹⁵ Գար. Չարհանաւեան, Մատենադարան հայկական թարգմանութեանց, 1889, էջ 224 :

զգաժառանգումն եւ գիտատեղին մի՛ մատուցանիցես տեառն» (ՂԵԼՈՒ. ԻԲ, 24), ուր, իբր, ընդգծուած բոլոր «համանիշները» նշանակում են «կուրտ, կրտուած»։ «Եթէ սրանք իբր հետ իբրեւ համանիշներ չկիրառուէին, առնուազն Քաղամաւոր եւ քաժառանգութեանը կը մտնէին այնպիսի բառերի շարքը, որոնց իմաստները մութ են մեզ համար առ այսօր» (էջ 35)։ Սակայն եթէ մեր հաւատարիմ թարգմանիչները չորս բառ են գործածել այստեղ, ապա դա ոչ թէ «համանիշասիրութեամբ» է, այլ որովհետեւ յուն. բնագիրն էլ չորս բառ ունի, որոնք նորադրոյն թարգմանութիւնների մէջ նշանակում են «ամորձիքները ներս քաշուած կամ ճմլուած, պոկուած կամ կրտուած», որոնք չորսն էլ «կրտուած» չեն նշանակում։

25. «Առաջինը Աստուածաշունչն է, որ պարզ բայեր կիրառելու փոխարէն առաջնութիւնը տուել է բաղադրեալ ձեւերին. աղօթել-ուն գերադասել է աղօթս առնել. Յաղօթս կալ՝ աղօթս մատուցանել, երկրպագել-ուն՝ երկիր պագանել, պատասխանել-ուն՝ պատասխանի տալ, պատասխանի առնել, հետեւել-ուն՝ գիտա երթալ, այցելել-ուն՝ այցելութիւն տալ» եւ այլն (էջ 35)։ Հեղինակը ցոյց չի տուել, թէ «բաղադրեալ ձեւերի» մէջ «ժողովրդական գեղեցիկ արտայայտչականութիւնը» ո՛րն է, փոխանակ պարզ մի բայի, եթէ սա գործածական էր այն ժամանակ։ Ասացինք, որ հեղինակը մերժում է դասական գրաբարի գոյութիւնը. արդ՛ զանի որ նշուած պարզ բայերը գործածական են դարձել փոխանակ «բաղադրեալների» յետադասական շրջանում, ապա նոյնը պիտի լինէին նաեւ Աստուածաշունչում։ Պարզ չէ՞, որ նշուած պարզ բայերը գործածական չէին հինգերորդ դարի սկզբում։ Ի դէպ, յետուելով Համաբարբառին՝ հեղինակը գրել է այցելանել, փոխ. յայցելանել-ի՛ յ- նախդրով, ինչպէս բնագրում է։

26. «Բերել բայը, որ կրել-ով բերել է նշանակում, երբեմն կիրառուում է բառնալ բերել գուգադրութեամբ (բերելին անդամաւոր մի բարձրալ (Մարկ. Բ 3)» (էջ 41)։ դասական գրաբարում սովորական է բարձրալ բերել արտայայտութիւնը, նոյնիսկ երբ «բառնալ» նիւթական իմաստը չկայ, ինչպ. «Բարձրալ բերել զհրաման հրամանատուին» (Եզնիկ, 1826, էջ 40), որ հակասում է հե-

ղինակի կողմից բերել բային տրուած «կրել-ով բերել» իմաստին։ Իսկ նրա բերած օրինակը լոկ թիւրիմացութիւն է, նրա՛ թիւրիմացութիւնը. բնագիրն է՝ «Բերելին առ նա անդամաւոր մի՛ բարձրալ ի չորից», ուր վերջին երեք բառերը նշանակում են «չորս (հոգու) կողմից կրուած՝ տարուած, բարձրացուած», ինչպէս յուն. բնագրում, եւ ոչ թէ բառնալ բերել զուգադրութեամբ։

27. Կրակատեղ (էջ 42), իրականում կրակետղ (Յով. ԻԱ, 9). նշում ենք, զանի որ չկայ կցական բարդութիւնների մէջ (էջ 128—130)։

28. «Գործել բայի առաջին նշանակութիւնն է հիւսել» (էջ 45). ի՞նչ հիման վրայ, ի հեճուկս բառարմատի եւ ամբողջ բառի նշանակութեան։ Էջի վերջից տ. 3-ում գործածածը համարուել է «Գործել բայը բառակազմական մի շարք ճիւղաւորումներ ունի» գրոյթի օրինակներից. պիտի լինի գործած (Ելք ԻԴ, 10). Իհարկէ հեղինակն աղբիւրներ չի նշում։

29. Առնել բայն իբր նշանակում է նաեւ «յարութիւն տալ, կենդանացնել», որի օրինակն է՝ «Ոչ կարէր սա, որ երաց զաչս կուրին, առնել (զմեռեալն յարուցանել. (Յովհ. ԺԱ 37, տե՛ս եւ 42, 45)» (էջ 48)։ Նախ՝ սպառնալիքներում ոչ-ը հարցական է՝ ըստ յուն. բնագրի։ Բայց մնացածը կա՛մ գիտութեան եւ կա՛մ բանասիրական ուղղամտութեան պակասի նշան է, զանի որ առնել բայից յետոյ նախադասութիւնը շարունակուում է՝ «... առնել, զի եւ սա մի մեռցի», որով ընթերցողի համար յստականում է բայի «անել» պարզ իմաստը, որ նոյնն է հեղինակի մատնանշած միւս երկու տներում. «... առնել, զի հաւատասցեն, թէ...» (42), «... իբրեւ տեսին, զոր արարն, հաւատացին ի նա» (45)։

30. «Երբեմն [առնել] բայը պահպանում է իր այս կամ այն իմաստը, երբեմն էլ բոլորովին նոր իմաստով է հանդէս գալիս. օրինակ՝ պաշտօն առնել — պաշտամունք կատարել, կամ ծառայութիւն մատուցել» (էջ 48), առանց որեւէ վկայութեան. Համաբարբառով գտանք «... արացես զպաշտաւնս զայս յամսեանս յայսմիկ» (Ելք ԺԳ, 5), ուր պաշտաւն-ը նշ. «կարգադրութիւն, հրաման», իսկ արացես-ը պարզապէս նշ.

«կատարել, գործադրել» առանց «նոր իմաստի»։ Հեղինակի այս օրինակին յաջորդում է այն գոյականների ցանկը, որոնցով առնել-ը «դարձուածքային միաւորներ» է կազմում, սակայն դրանում չկայ պաշտօն-ը։

31. «Համանիշների այս գուգադրութիւնը ցոյց է տալիս, որ բառերի մի մասը եղել է ընդհանուր ժողովրդական, իսկ միւս մասը տեղական կամ ոմարանական բնութագրով է հանդէս եկել» (էջ 49). անապացուցելի եզրակացութիւն։

32. «Համանիշ բառերը բացայայտում են նաեւ ընդհանուր համագային եւ բառապաշարի տեղական շերտերը, որոնք այս կամ այն քարգամանի միջոցով մուտք են գործել Աստուածաշունչ» եւ այլն (էջ 49). հեղինակի իսկ առարկութիւնը էջ 51-ում է. «Համանիշներով կարելի կը լինէր որոշել Աստուածաշնչի առանձին գրքերի թարգմանիչներին, եթէ այդ գրքերը ընդհանուր խմբագրման ենթակայ չգտնար Սահակի եւ Մեսրոպի կողմից, որոնք լեզուական կենտրոնախոյս ձեւերը չէզոքացրել են յօգուտ ընդհանրականի». բացի այդ՝ այդ «տեղական շերտերից» ոչինչ յայտնի չէ, զանի որ որպէս այդպիսիք գրի չեն առնուել։

33. Նշկահել բայի «Ստոյգ նշանակութիւնը ճշտուած չէ. բացատրում է ապրտամբել, ընդվզել, մերժել, արհամարհել, անգոսմել, լուծը քօքափել բառերով» (էջ 50)։ Լուռ առնուած է ՆՀԲ-ից, ուր իմաստի ճշտուածութեան մասին խօսք չկայ, այլ կան առատ վկայութիւններ։ Ստուգաբանութիւնն է, որ դեռ ճշտուած չէ (ըստ Արմ-ի, որ նոյնպէս յիշատակուած չէ)։ Հեղինակը ճշտում է, թէ իմաստն է «արհամարհել, իբրեւ իշխող այլեւս չճանաչել», որ ՆՀԲ-ում է, «իսկ կան օրինակներ, որտեղ իմաստը ապստամբել, ընդվզել է», որ դարձեալ ՆՀԲ-ում է։ Սա բաց դուռ խորտակել չէ՞։ Հեղինակն իր յայտնաբերած կամ ճշտած իմաստները հաստատում է Որբենացու հինգ վկայութեամբ, ցոյց տալով, որ Աստուածաշնչի եւ Որբենացու լեզուն նոյնն է։ Բոլորովին զարմացնելու համար երեւի, նա իր ճշտումները վերջացնում է այսպէս. «Վ դարում երեք անգամ եւս կիրառուած է, մէկ անգամ ունի Բուզանդը եւ երկու անգամ Կիրեղ Երուսաղէմացու «Կոչումն ընծայութեան-ը»» (էջ 51), մինչդեռ սրանից ճիշտ

առաջ ստել էր՝ «Այս բառը Վ դարում Բուզանդն ու Որբենացին են գործածել» (էջ 51). հայ մատենագիրների մասին տեղեկութիւններն առնուած են նրանց համաբարբառներից (Երեւան), առանց ստոյգ տեղերի, իսկ վերջինը՝ ՆՀԲ-ից, որ գլուխներն էլ է նշանակել, եւ Արմ-ից, ուր էջերն էլ են տրուած, էջ 53 եւ 109. մեր հեղինակը գործադրում է, երեւի, «Կե՛ր, այգին մի՛ հարցրու» առածը, զրեթէ միշտ։

34. «Մեր պատկերացումը մեր հին լեզուի նոյնութեան ու հարստութեան վերաբերեալ կազմուում է յիշեալ բառարանով», այսինքն «Նոր բառգիրք հայկազեան լեզուի» երկհատորեակով (էջ 52), սակայն այն զննադատելի է, որովհետեւ, օրինակ, ակն բառի 13 իմաստները եւ վկայութիւններով 6 էջ բռնած դարձուածքները՝ հեղինակի կողմից յայտնաբերուած ՍԳ-ում, «յիշեալ բառարանը չի արտայայտել» (էջ 52)։ Հեղինակը պարզապէս սխալ պատկերացում ունի ՆՀԲ-ի մասին. դա Աստուածաշնչի բառարանը չէ եւ միայն դրա վրայ հիմնուած չէ, իսկ բառացանկի տեսակէտից աւելի ճոխ են էմ. Զախ-Չախեանի բառարանը եւ Առձեռն բառարանը, որի սկզբում կարգում ենք. «Յաւելաք բառաւելի զան զհինգ հազար, եւ ոճս բանից բազումս», որոնց մէջ կարող են լինել նաեւ դարձուածներ ակն գոյականով։ Մեզ յայտնի է, որ Ս. Ղազարում եւ Նորայր Ն. Բիւզանդացու դիւանում նորայայտ բառերի ամբողջ տետրեր կան, եւ վերջինս իր դիւանում ունի ճոխացուած «Նոր բառգիրք հայկազեան լեզուի»։ Ի դէպ, մեր հեղինակը տարբերակում է ակն՝ «1. Տեսողութեան գործարան», «2. փխր. Տեսողութեան գործարանի արտաքին մարմինների ամբողջութիւնը, կոպ, թարթիչ եւ այլն». էլ ո՛ւր մնաց փոխաբերականութիւնը։

Ներածութեան մէջ ջննարկուած բառիմաստային եւ դարձուածաբանական բազմաթիւ հարցեր մեր կարծիքով պէտք է լինէին աշխատութեան «Բառապաշարը» էական մասում։

ԲԱՌԱՊԱՇԱՐԸ

35. Սա աշխատութեան էական մասն է իր Ա-ի գլուխներով եւ սրանց ենթաբաժանումներով։ Գրեթէ միշտ հեղինակը նկատի

է առեւ, անջատել, յաճախականութեան գու-
մարներով ու տոկոսներով խմբել բառապա-
շարի համաժողովրդական, բարբառային բա-
ռերը, դրականութեան միջոցով համաժողո-
վրդականացածները, բնիկներն ու փոխառ-
եալները (առանց Արմ-ն յիշելու), արդի
հայերէնի բարբառներում եւ դրական երկու
ճիւղերում գործածուողները եւ անգործա-
ծականները եւ այլն, իհարկէ սիւնակների
փոխարէն էջերով եւ չտարբերակուած տա-
ռատեսակով ներկայացնելով բառացանկեր:
Այս բաժանումները մնում են անձնական
տպաւորութիւններ, քանի որ նախագրային
բառերի մասին ոչինչ չգիտենք, ուստի խիստ
վիճելի են, ինչպէս հեղինակն էլ է նկատել
տալիս երբեմն, մանաւանդ իր «բարբառա-
յին» կոչած բառերի առթիւ (էջ 64, 71-72):
Նոյնիսկ դրաբարի ներսում անզգուշութիւն
չէ՞ արդեօք դրել, թէ «Այս երկու խմբի
բառերն էլ դրական լայն ասպարէզ չեն մտել,
չատ յաճախ միայն Աստուածաշնչում են
կիրառուել մէկ կամ երկու անգամ» (էջ 73),
կամ նման մի դիտողութիւն, երբ 5-րդ դա-
րի կամ նոյնիսկ դասական դրաբարի լրիւ եւ
անթերի համաբարբառներ դոյութիւն չու-
նեն, Աստուածաշնչին էլ խիստ պակասաւոր
եւ սխալաչատ է:

ՆԱԽԱԾԱՆՑՆԵՐ

36. «Նախածանցները բաժանում են
երեք խմբի՝ ա) ժխտական նախածանցներ»
(էջ 76). 2-րդ խումբը հաւանաբար «նախ-
դիր-նախածանցներն» են (էջ 77), իսկ եր-
րորդը չի իմացում: — «Ամ ածանցով կազ-
մուած կան՝ ամբարիչտ, ամբիծ, ամփո-
փ(ել), ամփոփ նշանակում է նաեւ զուրկ,
անմասն» (էջ 76). Մ. Աբեղեանը հայերէ-
նում ամ- նախածանց չի յիշատակում, այլ՝
«Ատամնային Ն հնչիւնը շրթնային Բ-ից
առաջ դառնում է շրթնային Մ, ինչպէս՝
անբիծ — ամբիծ, անբաւ — ամբաւ»¹⁶: Արմ-ն
ամբիծ-ը պարզապէս յիշատակում է բիծ ար-
մատի տակ. ՍԳ-ն տպագրւում ունի ամ-
բիծ, որ, ըստ մեզ, ուղղադոյն ձեւն է, բայց
ունի ամբծութիւն, որ անհետեւողականու-
թիւն է: Չունի նաեւ ամփոփ, ունի ամփոփել
եւ ամփոփիմ բայերը, իսկ ամփոփ «զուրկ,
անմասն» իմաստը յատուկ է, ըստ ՆՀԲ-ի եւ
Արմ-ի, միջնադարեան Ն. Շնորհալու: Հե-
ղինակը խուսափել է ՍԳ-ի ամուլ կամ ամու-
րի բառերից, որոնք բացասական իմաստ
ունեն, քանի որ, հաւանաբար, դրանց ստու-
գարանութիւնը ստոյգ չէ: Ըստ Արմ-ի՝ ամ-
բարիչտ-ը կազմուած է ամ- բացասական
մասնիկով, եւ ոչ թէ ամ- նախածանցով:

37. «Ապ, ապի ... մասնիկներով ունենք՝
ապահարկ, ապաշնորհ, ապիկար, ապուշ...»
(էջ 77). աւելի որոշակի է Մ. Աբեղեանը.
«ԱՊ — բաղաձայնից առաջ ապա»¹⁷, ինչպէս
առաջին երկու օրինակներում, սակայն նա էլ
ապիկար-ը նշում է առանց դիտողութեան
(էջ 221):

«Մասնիկները» մէջ է նաեւ տ-ն, սա-
կայն ՍԳ-ի տգէտ բառը չի նշուել:

38. «Նախդիր-նախածանցներով բառեր»
(էջ 77), վերնագրի տակ մոռացուել է առ-ը,
որ նշուել է էջ 22 եւ 23-ում առ-կայծել եւ
առագաստ օրինակներով. Գործք ԻԱ 7-ում
կայ նաեւ առխթեալ, որն ըստ մեզ կասկա-
ծելի է:

2 մասնիկով նշուել է չեմ «բառը» (էջ
77), որի աղբիւրն անհրաժեշտ էր ցոյց տալ:

39. «Միւս խմբի մէջ են մտնում ամեմա,
ամ (յրայ), ապա, գեր... ւ ... կամա...
մասնիկները» (էջ 78). յայտնի չէ, թէ ո՞րն
է այդ «միւս խումբը», քանի որ նշուածները
նախդիր-նախածանցներ չեն մեր կարծիքով:
Սփիւռ օրինակը նշուած է թէ՛՛ այստեղ ւ-ի
համար եւ թէ՛՛ նախորդ խմբի մէջ գ-ից ծա-
ղած ւ նախածանցի տակ (էջ 78, տ. 1): Պի-
տի ասենք նաեւ, որ Արմ-ն որոշ բառերի
առաջին «մասնիկ» մասին այլ կարծիք է.
այսպէս՝ փաստու-ը, որ հեղինակը դնում է
փաս մասնիկի տակ, «կազմուած է փաս եւ
փու բառերի բարդութեամբ. առաջինը ան-
ծանօթ է, երկրորդը փու, փել բառերի ար-
մատն է» (Փաստու բառայօդուածում):
Իհարկէ հեղինակն ազատ է իւրովի ստուգա-
բանելու, բայց ընթերցողին պիտի տեղեակ
պահի արդէն արտայայտուած տեսակէտի
չուրը:

40. էջ 79-ում կարդում ենք «այնր (այն-
տեղ)», որ դուցէ պիտի լինի անդր, ինչպէս
էջ 75-ի եղեգ-ը՝ եղեգն:

41. «Աստուածաշնչում կիրառուած վեր-
ածանցներն են...» (էջ 80). տրուում է ընդ-
հանուր ցանկը (բոլորը, դրեթէ, գծիկով, որ
դուվելի է), որից առանձնացնում է բաղադ-
րեալները. մի ընդհանուր ցանկ արդէն կար
էջ 23-24-ում, ուր վերջածանց է համարուել
նաեւ բեկտել բայի -տ- ն կամ ինթեկ-ի
-կ- ն: Սակայն երկու ընդհանուր ցանկերի
համեմատութիւնը պարզում է, որ թէեւ
1-ինն ունի 154, իսկ 2-րդը՝ 150 վերջածանց,

42. -Ած վերջածանցի օրինակներում է
տաղալս բառը (էջ 83), -աստան-ի տակ է
նաեւ միասին (էջ 90), որ նոյն էջում կայ ար-
դէն -ասին-ի տակ: Հաւանաբար անուշադ-
րութեամբ հետեւանք են:

43. -Ակ «փոքրացուցիչ» վերջածանցի
օրինակներից են բաղաբառական -ակ ունեցող
եղբորորդեակ եւ որդեակ բառերը (էջ 84),
որոնք պիտի լինէին «Ներքոյն փոխում է
բառի նշանակութիւնը. օրինակ՝ անուշակ
(փաղաքական)» նրբբանդի տակ (նոյն
էջում):

44. -Անակի վերջածանցի տակ, որ
«կազմուած է նախորդ ածանցից [-անակ] ի-ի
կցումով» (էջ 88), բերուել է նաեւ փու-
քանակի-ն, որն արդէն էջ 85-ում -ակի-ի
օրինակներից է: Միւս կողմից էլ 80-ի բա-
ղադրեալ վերջածանցների ցանկում չկան
-ակի եւ -անակի բաղադրեալները:

45. -Ամբ վերջածանցի տակ են «մակ-
բայական նշանակութեամբ բառերի» հետ
(իբրաւամբ, ողջամբ, էջ 86) հասարակ դոր-
ծիականներ՝ անձամբ, անմտութեամբ, ող-
ջութեամբ, իմաստութեամբ, որոնց պակա-
սում է «եւ այլն». սա անընդունելի է. իսկ
-ամբ-ը «Երկու մասնիկից է կազմուած՝ ան
(ամ) սեռականի մասնիկ, եւ բ (գործիակա-
նի վերջաւորութիւն)». տարբական բաների
տղայական խառնուրդ: Այս նոյն -բ հոլովա-
կերտը վերջածանց է համարուել էլ 95-ում
-ութիւն վերջածանցով դոյականների եզ-
դործիականում՝ միաբանութեամբ եւ այլն,
բացի արդեամբ-ից, որը, սակայն, էջ 97-ում
-եամբ ածանցի միակ օրինակն է:

¹⁶ Մանուկ Աբեղեան, Հայոց լեզուի տեսութիւն,
Երևան, 1965, էջ 103:

¹⁷ Մ. Աբեղեան, ն. տ., էջ 220:

3-ի օրինակներից է յակամայ (էջ 77),
սակայն ՍԳ-ն ունի ակամայ եւ յակամայց,
իսկ «Յակամայ կամա ել յերեսաց իշխանին»
(Ժող. Ժ, 5) նախադասութեան մէջ ակա-
մայ -ն ածական է, եւ յ-ն կամա հայցականի
նախդիրն է: Յ-ն նախածանց չէ նաեւ
նշուած բաղաձայնի օրինակներում՝ յակամէ,
յայնմիտեւ, յայնկոյս, յամմ, յանուամէ,
յամուն, յաչս, յորոց («որովհետեւ») եւ այլն,
որոնց յ-ի մասին էլ իզուր է ասուում, թէ
չպէտք է շփոթել յ- նախդրի հետ:

38- նախդիրը նախդիր-նախածանց չէ
բաղաձայնի օրինակներում՝ ցայժմ, ցայնժամ,
ցայսվայր, ցայսօր, ցարդ, ցերք, ցորժամ,
ցորժան (էջ 78), այլ պարզապէս նախդիր:

39. «Միւս խմբի մէջ են մտնում ամեմա,
ամ (յրայ), ապա, գեր... ւ ... կամա...
մասնիկները» (էջ 78). յայտնի չէ, թէ ո՞րն
է այդ «միւս խումբը», քանի որ նշուածները
նախդիր-նախածանցներ չեն մեր կարծիքով:
Սփիւռ օրինակը նշուած է թէ՛՛ այստեղ ւ-ի
համար եւ թէ՛՛ նախորդ խմբի մէջ գ-ից ծա-
ղած ւ նախածանցի տակ (էջ 78, տ. 1): Պի-
տի ասենք նաեւ, որ Արմ-ն որոշ բառերի
առաջին «մասնիկ» մասին այլ կարծիք է.
այսպէս՝ փաստու-ը, որ հեղինակը դնում է
փաս մասնիկի տակ, «կազմուած է փաս եւ
փու բառերի բարդութեամբ. առաջինը ան-
ծանօթ է, երկրորդը փու, փել բառերի ար-
մատն է» (Փաստու բառայօդուածում):
Իհարկէ հեղինակն ազատ է իւրովի ստուգա-
բանելու, բայց ընթերցողին պիտի տեղեակ
պահի արդէն արտայայտուած տեսակէտի
չուրը:

ՎԵՐՁԱԾԱՆՑՆԵՐ

40. էջ 79-ում կարդում ենք «այնր (այն-
տեղ)», որ դուցէ պիտի լինի անդր, ինչպէս
էջ 75-ի եղեգ-ը՝ եղեգն:

41. «Աստուածաշնչում կիրառուած վեր-
ածանցներն են...» (էջ 80). տրուում է ընդ-
հանուր ցանկը (բոլորը, դրեթէ, գծիկով, որ
դուվելի է), որից առանձնացնում է բաղադ-
րեալները. մի ընդհանուր ցանկ արդէն կար
էջ 23-24-ում, ուր վերջածանց է համարուել
նաեւ բեկտել բայի -տ- ն կամ ինթեկ-ի
-կ- ն: Սակայն երկու ընդհանուր ցանկերի
համեմատութիւնը պարզում է, որ թէեւ
1-ինն ունի 154, իսկ 2-րդը՝ 150 վերջածանց,

46. -Այբ-ը «Գրաբարում եւս մթնածածանց է. ունենք միայն մի բառ՝ ճառագայթ. ճառագայթը բայը յայտնի է բարբառներից: Ընդամենը 21 բառ» (էջ 86). Հաւանաբար ուզում է ասել, որ ՍԳ-ում չկայ նախագի, բայց 21 թիւն ի՞նչ է. պէտք է կարդալ 2, թէ՞ 1:

47. -Ային ածանցի տակ բերուած է մեղացային, որի «ային ածանցը կցուած է յոգնակի սեռականի ձեւին եւ կիրառուած է գոյականաբար (այս օրէն իցէ վասն մեղացայնոյն (ՂԵԼՈՒ, 2 25), նշանակում է զոհ, ողջակէզ» (էջ 86). բառը բնագրում մեղացայնոյն է եւ ըստ ՆՀԲ-ի մեղացային (-այնոյ կամ -այոյ) նշ. «զոհ վասն մեղաց, որ եւ ասի՝ վասն մեղաց», ինչպ. ՂԵԼՈՒ. 2 25-ում: - Նոյնպէս էլ 87, -այն ածանցի տակ կարողում ենք նախ գիշերայն եւ լեռնայն, իսկ մի քանի տող յետոյ, նոյն ածանցի տակ՝ գիշերային, լեռնային:

48. «-Այնոյ ածանցով ունենք ամառայնոյ (ային + ոյ), վաղորդայնոյ» (էջ 87). ի՞նչ խօսքի մաս են այս բառերը, որոնք Համաբարբառում չկան, իսկ ՆՀԲ-ն ունի ամառային, դ., սեռ. ամառայնոյ, ամառայնոյ, եւ վաղորդայն, դ., սեռ. վաղորդայնի (ՂԵԼՈՒ. 2, 4 «ցաւոյ վաղորդայնոյ»):

49. -Ան-ը «Յատկապէս միանում է բայարմատների հետ եւ կազմում է գոյականներ ու ածականներ» (էջ 87). օրինակներից են հանդերձան եւ շրջան, որոնք կրկնուել են «Գոյականներից կազմում է նոր գոյականներ» (էջ 87) դիտողութեան տակ. ո՞րն է ճիշտը:

50. -Անակ վերջածանցով «կան միայն՝ շրջանակ, փոխանակ, յաղթանակ: Առաջինները գոյական են, երկրորդը՝ կապ» (էջ 88). Հաւանաբար դասաւորումը ճիշտ չէ. սրանց համար ասուած է նոյն տողում՝ «Բնիկ բառ չկայ», իսկ ըստ Արմ-ի՝ շուրջ-ը «հայակերտ բառ» է:

-Անակաւ «վերջածանցի» (եթէ կայ) միակ օրինակն է շուրջանակաւ, որ Համաբարբառը չունի. ՆՀԲ-ում մակբայ է համարուել եւ օրինակներից է՝ «Ընդ շուրջանակաւ պսակի նորա» (ԵԼԸ Լ, 4), ուր շուրջանակ գոյականը պարզապէս ընդ նախդրի հետ գործիական է. արդէն բառարանը մի քանի անգամ զգուշացրել է՝ «կամ շրջանակաւ», որը շրջանակ-ի սովորական գոր-

ծիականն է: Հեղինակն այս շուրջանակաւ-ն ունի դարձեալ -աւ վերջածանցի տակ՝ «-Աւ ածանցը եզակի գործիականի վերջաւորութիւնն է, որ մի շարք բառերի վերջում վերածուել է մակբայական մասնիկի» (էջ 93):

51. -Անի վերջածանցի օրինակներից է դոզանի «դոյականը» (էջ 88). ՍԳ-ի վկայութիւնն ըստ ՆՀԲ-ի՝ «Երիկամունք իւր գոռովմանի հարան» (Ա Մակ. Բ, 24), դոզանի գոյականի համար. Արմ-ն դոզ արմատի տակ ունի դոզանի բառը գոռովմանի հարկանիլ դարձուածքում Լամբրոնացու վկայութեամբ: Դոզանի-ն չի կարող գոյականի ուղղականը (կամ հայցականը) լինել, քանի որ հարկանիմ (եւ գարկանիմ) բայի անուղղակի խընդիւրը դրուում է գ- նախդրով տրական, սա յայտնի է: Դոզումն բառայօղուածում ՆՀԲ-ն ունի գոռովման, գոռովմանի, գոռովմի, գոռովի որպէս հարկանիմ բայի հետ գործածուող ըստ մեզ՝ միակ դասականը գոռովման-ն է, դոզումն գոյականի տրականը:

52. -Անցիկ ածանցն ունեցող անթանցիկ բառը բացատրուել է «մի անութ օրան» (էջ 89), իսկ ըստ բառարանների է՝ «ցորենի կապոց՝ թեւին տակը զարկած» (Առձեռն), եւ օրան (արան)՝ «որաներու դէզ, որայ դիզած՝ ցորենը կամնելու համար»:

53. «Անց-ով կայ միայն՝ միմեանց (միմի-անց)» (էջ 89). սա սովորական փոխադարձ անձնական դերանունն է, որ ըստ Արմ-ի «կազմուած է մի բառի կրկնութեամբ». բառարանը դնում է «Միմեանք. գործածական է միայն հոլովեալ ձեւով. սեռ. միմեանց» եւ այլն (Մի բառայօղուածում):

54. -Աստան, -ստան վերջածանցների տակ տրուած է 8 օրինակ (մոռացուել է ՍԳ-ի Աստրեստան-ը), բայց ասուած է՝ «Այս 12 բառից բնիկ են...» (էջ 90): Անփոյթ հաշիւ:

55. -Արիչ ածանցի միակ օրինակն է կափարիչ (էջ 91), որի ածանցն ըստ մեզ բաղադրեալ է՝ -ար-իչ:

56. «-Աց ածանցը առաջացել է ա խոնարհման բայերի անցեալ կատարեալի հիմքից» (էջ 91), սակայն օրինակներում են նաեւ՝ կանխասաց եւ սաղմոսասաց, որոնց երկրորդ եզրը ասել բայի անցեալ կատարեալ հիմքն է, ինչպէս եւ կովադիաց եւ ստնդիաց, որոնք ենթադրել են տալիս դիւր բայը. կայ նաեւ օրինակներում քաղցրահայաց, բնա-

գրում քաղցրահայաց, որ ենթադրել է տալիս Ի լծորդութեան հայիմ բայի կատարեալի հիմքը: - Նոյն -աց, -ացք վերջածանցի տակ կարողում ենք. «Երեք բառի մէջ աց սեռականի վերջաւորութիւն է. գիշերաց (գիշերով), դիմաց (դէմը) հասարակաց (հաւասար, ընդհանուր), ընթաց(ք)» (էջ 92). եթէ առաջին երեքը մի կերպ ընդունենք, չորրորդը, որ երեքի հաշուի մէջ չի մտնում, դարմանալի է, քանի որ ըստ Արմ-ի՝ արմատն է ընթ-:

57. -Ացի, -ացիկ միացեալ ածանցի (կամ ածանցների) տակ կարողում ենք. «Այս ածանցով կազմուած են յատուկ տեղանուններից մի տեղացի ցոյց տուող բառեր» (էջ 92). -ացի՝ հեղինակը բերել է, իր հաշուով, 200 բառ, որ կասկածելի է, քանի որ Համաբարբառը, որտեղից լուռ քաղուած են, պակասաւոր է. բայի այդ՝ ցանկում նկատելի են անճշտութիւններ. այսպէս՝ աղսմացի-ն պիտի լինի Աղսամացի (ըստ բնագրի). աղսմացի անոյ է եւ բնագրում աղսմացի սեռականն է, որ այստեղ գործ չունի. անամիացի-ն, որ Համաբարբառում էլ այսպէս սխալ է, իրականում եւ բնագրում Անամիացի է. գեգեսացի-ն բնագրում գեգեսացի է. սպանիացի-ն իրականում սպանիացի է. եւ բոլորը չենք ստուգել: Համաբարբառում չեղող բառերն իհարկէ ցանկում էլ պակասում են, ինչպէս՝ Լաբիիացի (Լաբիիացի, Ա Մնաց. Ա, 11), Լուբիացի (անդ) եւ այլն:

Կարելի է մեզ առարկել, թէ յամենայն դէպս յիշատակուած է -ացի վերջածանցի գոյութիւնը ՍԳ-ում. սակայն չի նշուել նրան հոմանիչ-ցի-ն՝ Ասիացի (Ասիա), Լիւստրացի (Լիւստրա եւ Լիւստրա, Գործք ԺԴ 7. ԺԶ 2), որ Համաբարբառի հետեւողութեամբ ցանկում լիւստրացի սխալ ձեւով է: Հեղինակը նշել է նաեւ -ացի-ի հոմանիչ -եցի-ն (էջ 102), սակայն առանց բացայայտելու երկուսի հնչիւնական պատճառները:

Ցանկում կայ նաեւ տիտանացի, ըստ տիտանացուց կամ Տիտանացուց ձեւի, քանի որ ՍԳ 1860-ում փոքրատառով յատուկ անուններ էլ կան, իսկ ՍԳ 1895-ը միանգամայն կանոնաւոր է արդի ուղղագրութեան կանոնի համաձայն. սակայն տիտանացի-ի (Բ Թագ. Ե, 18, 22. Յուդ. ԺԶ, 8) ածանցը «մի տեղացի ցոյց տուող» չէ, ըստ որում

բառարաններն ունեն տիտանացիք = տիտանիք:

-Ացիկ վերջածանցի միակ օրինակը մուրացիկ-ն է (էջ 93). այս ածանցը հաւանաբար բաղադրեալ է՝ -աց-իկ:

58. «-Աւ ածանցը եզակի գործիականի վերջաւորութիւնն է, որ մի շարք բառերի վերջում վերածուել է մակբայական մասնիկի» (էջ 93). շուրջանակաւ օրինակի մասին արդէն խօսեցինք դիտ. 50-ում: Ինչ վերաբերում է միւսներին, ապա չենք կարծում, որ բոլորն էլ վերածուած լինեն մակբայներին, ինչպէս՝ մեծաւ, կարգաւ, տագնապաւ եւ այլն: Դիտ. 45-ում տեսանք, որ հեղինակը վերջածանց է համարում նաեւ -ուքիւն վերջաւորուող վերացական գոյականների եւ (արդիւն) արդեամբ եզակի գործիականի -ամբ-ն ու -եամբ-ը եւ նոյնիսկ նրանց -ք-ն, երեքն էլ զատ-զատ:

59. «-Աւին: Կայ միայն տակաւին: Ընդամենը 43 բառ» (էջ 94). վերջածանցը հաւանաբար -ին է, որ աւելացուել է եզ. գործիականին. սակայն, ի՞նչ էլ լինի, անհասկանալի է 43 թիւը:

60. «-Յայ: Գրաբարի անցեալ դերբայի ածանցն է, բայց այս ածանցով շատ բառեր են կազմուած, որոնք երբեմն բայական ուրիշ ձեւ չունեն, կամ գործածուած են իբրեւ գոյական, ածական եւ այլ խօսքի մաս» (էջ 95). 78 օրինակից յետոյ՝ «Մրանց մէջ գուցէ մի երկու-երեքը դեռեւս բառական մակարդակի չեն բարձրացել, բայց մեծ մասամբ առանձին բառեր են, ինչպէս մեր գրական լեզուում -ած մասնիկով կազմուած բառերը» (էջ 96): Ըստ մեզ՝ բոլորն էլ անցեալ դերբայներ են, անկախ իրենց գոյականական, ածականական կամ դարձեալ բառի մակբայական գործածութիւնից, մանաւանդ եթէ բայական այլ ձեւ էլ ունեն. սակայն ՍԳ-ում բայական այլ ձեւերի պակասը դեռեւս պատճառ չէ, որ դրանք սովորական անցեալ դերբայներ չլինեն:

61. -Յայ ածանցի համար բերուել է նաեւ գոնեայ «եղանակաւորիչ» բառը. յայտնի է, որ այս բառը գրուել է նաեւ գոնէ, գոնեա (որ, ըստ հեղինակի, «Մեր խօսուածքում [Ա. Աբովեանի շրջան, Կոտայք] պահպանուած է գոնեա ձեւով», էջ 25) ձեւերով եւ ըստ Արմ-ի (Գոնեա բառայօղուած) «Կո-

րած մի բայի միակ մնացորդն է. համտ. գուցէ. յիշեալ բայի ներկան է *գոնեմ, որի հրամայականը պիտի լինի գոնեա»:

-Եայ, -Եայք ածանցի տակ են նաեւ՝ առաջեայք, հրէաստանեայք եւ ոսնջեռեայք. բուն վերջածանցը հաւանաբար -եայ է, իսկ -է յոյ. ուղղականի յոյնակերտն է. վերջին բառը ոչ մի բնագրում կամ բառարանում չգտանք. մոռացուել է ՍԳ-ի Ասորեստանեայք-ը՝ Համարարբառում Ասորեստան բառայօղուածում խառն:

62. Երեքեան անձներական թուական անունը համարուել է -եան վերջածանցով եւ՝ «Սա պէտք է լինէր երեքեքեան» (էջ 99), իսկ Արմ-ն երեք բառայօղուածում գրում է. «Երե- , որից՝ երեքին, երեքեան», եւ էջ 50ր՝ «Հյ. երե- եւ երի- բունների տարբերութիւնը գտնուում ենք նաեւ միւս ցեղակից լեզուների մէջ»:

63. -Եաց վերջածանցը «Ն խոնարհման ցոյական բայերի հիմքային մասն է (յը-բեմ-դրեցի, դը-եաց), որ սահմանափակ թուով բառեր է կազմում հիմնականում գործող անձի նշանակութեամբ» (էջ 99-100): Ճշտելի է, որ «ցոյական բայեր» չկան, այլ կան անցեալ կատարեալի ցոյական կամ ց տառով կամ ածանցով վերջաւորուող հիմ-բեր: Օրինակներում են նաեւ Ի լծորդութեան բայերի անցեալ կատարեալի ցոյական հիմ-բերով բառեր՝ ամենահայեաց, համարակա-հայեաց եւ քաղցրահայեաց (որ վրիպակով՝ վերջածանցի տակ, տե՛ս մեր դիտ. 56): Հրայր-եաց օրինակը ենթադրել է տալիս նոյնպէս այրիմ-ի կատարեալի հիմքը, քանի որ հե-ղինակը բացատրում է որպէս «հրով այրած» (էջ 100). Եփիմ չէզոքն է ենթադրել տալիս կիսեփեաց «կիսեփ» ածականը: Խաղաղա-կեաց-ի 2-րդ եզրը կեալ բայի կատարեալի հիմքն է (Ա լծորդ.): — Հեղինակը -եաց-ին կցել է -եացք վերջածանցը, որի միակ օրի-նակն է ափեացք, սակայն սա ափ- արմատից է անշուշտ, բայց ոչ «ցոյական մի բայի հիմ-քային մասից». բացի այդ՝ հեղինակի «ոտք» թարգմանութիւնը չի համապատասխանում բառարանների բացատրութեանը՝ «ոտքը սրունքով միասին»: Վերջապէս ո՞ր բայից է յոսնկելեաց օրինակը (Ա Թագ. ԻԸ, 20), որի ուղղականը ՆՀԲ-ում ոսնկելիք է «յոտն կամ կանգուն կալն», իսկ Արմ-ն ունի

յոսնկելեաց «ոտքի վրայ կանգնած ուղիղ» . Ֆրանս. թարգմանուել է «ամբողջ երկայն-քով՝ հասակով մէկ» . «Փութացաւ Սաւուղ եւ անկաւ յոսնկելեաց ի դեպին» . էջ 109-ում -իք վերջածանցի տակ գտնուում ենք ոսնկե-լիք, ինչպէս ՆՀԲ-ում:

64. «-Եղէն մասնիկը ... Աստուածա-չընչում կցուելով գոյականներին կազմում է ածականներ, որոնք արտայայտում են տուեալ նիւթից կազմուած լինելու նշանակութիւն» (էջ 100). տրուած է նաեւ «մարդկեղէն (մարդկային. մարդկեղէն մարմին)», որ ամբողջովին չի համապատասխանում սկզբ-բունքին (համտ. «մարդկեղէն մեղաց», Թիւր. Ե, 6) . «մի բառի մէջ էլ -ային ածանցի նշանակութեամբ է կիրառուած՝ աստուա-ծեղէն» (էջ 101). ըստ մեզ՝ այսպիսին է մարդկեղէն-ը:

65. «-Ենի մասնիկը մեծ մասամբ կցուում է պտուղներ, ընդեղէններ, նիւթեր նշանա-կող գոյականներին, որպէսզի արտայայտի այդ պտուղների՝ նիւթեր արտադրող բոյսերի անունները» (էջ 101). մոռացուել են ծառե-րը: Այլ բառերի մէջ նշուած է նաեւ «երեմնի (եռամեայ)», որն ուղղելի է երեմնի (երե-մնեալ, Ա Թագ. Ա, 24): Առանց սխալին անդրադառնալու հեղինակը դրել է. «Հնա-ցած է երեմնի» (էջ 101):

66. «-Երորդ մասնիկով քանակական թուականներից կազմում են դասական թուականներ ... նաեւ՝ առաջիներորդ» (էջ 101), որը, սակայն, առաջին ածականից է, որի մասին էջ 107-ում ասուում է, թէ -ին վերջածանցով կազմուած է ածականից, որով առաջ-ը դառնում է ածական. հաւա-տալի չէ:

67. «-Է մասնիկը բացառականի վեր-ջաւորութիւնն է եղել հետեւեալ բառերի վերջում, որոնք դադարել են այլեւս բացա-ռականի ձեւ հանդիսանալուց եւ դարձել են մակբայներ. ինչպէս յահեկէ, յայդուէ ... յանձնէ, յանուանէ ... յառաջմէ» (էջ 103). միանգամայն մերժելի դրոյթ, որ հոլովա-ձեւը չփոթում է խոսքիմասային փոխանցման հետ: Նշուել է նաեւ «իննէ (մի կերպ)» . «Բայց բարբարէիք իմնէ» (Փիլ. Դ, 10), որ ՍԳ 1895-ը մեկնաբանել է «չէր մարթ» . ՆՀԲ-ն նոյն բառայօղուածում ունի իմնապէս (Արիստոտէլ) եւ իմնէ (մեր նշած միակ

վկայութեամբ). ըստ մեզ՝ իմնէ-ն հաւանա-բար պիտի լինի իմն «մի կերպ» մակբայաբար դործածուած, որ կարող էր տալ իմնապէս յետդասական ձեւը: Ցանկում են նաեւ հետեւ (փոխ. հետեւ), գուցե (փոխ. գուցէ) եւ իցէ, որ, չդիտենք, ինչի՞ բացառականն է եղել եւ որը էջ 123-ում համարուել է -ցէ վերջա-ծանցով բառ: Այստեղ է նաեւ գոնե (փոխ. գոնէ), որի գոնեայ ձեւն էջ 98-ում -եայ ածանցի տակ է:

68. «-Էց մասնիկը գտնուում ենք միայն զեմընկէց, արդընկէց, կարթընկէց, տիգըն-կէց, քարընկէց բառերի հետ բաղադրուած ող ածանցի նշանակութեամբ» (էջ 103). կարծում ենք, որ Ա. Մեյէն ճիշտ է ասել, թէ այս բառերում, որոնց նմուշը նրա հա-մար քարընկէց-ն է, ընկէց-ը ընկեմուլ ներ-դործական բայի կատարեալի եզ. 3-րդ դէմ-բըն է կամ անցեալ կատարեալի հիմքը¹⁸:

69. -Ի ածանցը «Անպայմանօրէն սեռա-կանի վերջաւորութիւնն է՝ ածանցի վերա-ծուած» (էջ 104). Ա. Մեյէն այսպիսի հաս-տատուական կարծիք չունի այս մասին. ըստ նրան՝ -ի ածանցը ծագել է հնդեւ. *iyo -ից¹⁹:

«Ամենից առաջ անորոշ դերբայի (մա-սամբ անցեալ դերբայի) վերջից բաղադրուե-լով կազմում է սպառնի դերբայներ» (էջ 104)²⁰. Հեղինակը չի նշել, թէ որո՞նք են իր ցանկում անցեալ դերբայից կազմուած սպառնի դերբայները, դոնէ «մասամբ», իսկ մենք ոչ մի հատ չտեսանք կէս էջանոց ցան-կում:

Կասկածելի է ընթերցանելի-ն (Բ Մակ. Բ, 26), որ կազմուած է ՍԳ-ում մէկ անգամ դործածուած ընթերցանելի-ից («ընթերցանել ի մատենէն», Երեմ. ԼԶ, 8):

Ցանկում կրկնուած գտնուում ենք դժուա-րաբառաւոր, որը ՍԳ 1860 եւ ՍԳ 1895-ում կամ Համարարբառում չկայ, իսկ ՆՀԲ-ն այն դնելով հանդերձ (Առակ. ԻԷ, 3) զգուշա-ցնում է՝ «ա՛յլ ձ. դժուարին առ ի բառաւոր», ինչպ. ունեն նշուած երկու սպառնիները եւ ՍԳ 1805-ը:

¹⁸ Ա. Մեյէն, Հայագիտական ուսումնասիրութիւն-ներ, էջ 99, տ. 3-4:
¹⁹ Ա. Մեյէն դրանք անուանել է «բայածականներ» (Esquisse, էջ 75):
²⁰ Ն. տ., էջ 128:

Հեղինակը եթէ դասական գրաբարի դոյութեան կողմնակից լինէր, կ'առանձնա-ցնէր կամ երկբայութեամբ կը նշէր անփո-փոխելի-ն (Երբ. Զ, 18), որ ՍԳ-ում հաւա-նաբար միակ բառն է ան- եւ -լի զոյգ ածանցներով, որոնք իրար հակասում են: ՍԳ-ում անփոփոխել բայ չկայ, որ անփոփո-խելի-ն տայ:

Կասկածելի կիզելի-ն կազմուած պիտի լինէր կիզել բայից (կամ, գուցէ, ըստ հե-ղինակի՝ կիզեալ անցեալ դերբայից), բայց ՍԳ-ում բայը կիզուլ է, իսկ Սաղ. ՃԳ 4-ում կարդում ենք «ի հուր կիզելոյ», որ գուցէ կիզուլ էր (ՆՀԲ-ն գրում է «կամ կիզելոյ»՝ կիզելի-ի տակ):

Որոշ բառեր այստեղ միաժամանակ մի քանի ենթացանկերում են. ծիրանի ծառա-նուն (էջ 104) եւ ծիրանի ածական (էջ 105), այսի մակբայ (էջ 104) եւ այսի «(այդ-ից)» (չդիտենք՝ ի՞նչ խօսքի մաս է եւ ի՞նչ է նշա-նակում), քանի մակբայ (էջ 104) եւ քանի (դերանուն) (էջ 105), մեկուսի ածական (էջ 105) եւ մեկուսի (էջ 105, 2-րդ այսի-ից յե-տոյ, ի՞նչ խօսքի մաս): Ուրիշ բառեր կրկնուում են -ի ածանցի կազմած «գոյական-ների, կապերի, ձայնարկութիւնների եւ այլնի» միացեալ ցանկում, ինչպէս՝ գործի առանց թարգմանութեան եւ գործի «գոր-ծիք», երանի եւ երանի առանց բացատրու-թեան: Այս ցանկում է նաեւ «երեւի (թւում է)» բառը. ինչո՞ւ, ի՞նչ խօսքի մաս է -ի վերջածանցով:

70. «Շահատակութիւն բացատրուած է յարձակում. ճիշտ չէ. նշանակում է գոռոց դռնի, համեմատի՛ր. Ձայն հարուածոց, ձայն շարժմանց անուոյ, շաչիւն կառաց, շա-հատակութիւն հեծելոց. (Նաւ. Գ, 2)». հե-ղինակն իր «ճիշտ չէ»-ն բխեցնում է նախա-դասութեան մէջ աղմուկ նշանակող ձայն եւ շաչիւն բառերից, սակայն ՆՀԲ-ն շահատա-կութիւն բառայօղուածում այս վկայութեան այս բառի համար նշում է յուն. բնագրի բառի իմաստը՝ «յուն. հետամուտ». արդի Ֆրանս. թարգմանութեան մէջ շահատակու-թիւն հեծելոց-ի յունարէնը թարգմանուել է «յարձակուող հեծեալներ». ՆՀԲ-ն ունի նաեւ շահատակիմ (ճիշտը՝ շահատակեմ) «յար-ձակուել», որ դասական գրաբարում կայ:

71. «Հագուաղէպ կիրառուող ածանցա-կան մասնիկներ»-ից է համարուել -ման-ը,

որի միակ օրինակն է արձակման՝ «ապահար-
զանի թուղթ» բացատրութեամբ (էջ 110) .
Թարգմանութիւնը ճիշտ է, բայց բառը ար-
ձակումն գոյականի սովորական եզ. սեռա-
կանն է, որ բնագրում գ- նախդրով փոխա-
նուն սեռական է՝ «Որ արձակիցէ զկին իւր,
տացէ նմա գարձակմանն» (Մտթ. Ե, 31),
ուր զեղչուել է գրուիթ յատկացեալը. հմմտ.
«Ո՛ւր է թուղթն ապահարգանի» (Երեմ. 9,
8), «Տալ թուղթ մեկնելոյ» (Մտթ. ԺԹ,
7) : Եթէ հեղինակի պէս դատելու լինենք,
ապա ածանցաւոր պիտի համարենք նաեւ
յայտնի «Տո՛ւք զկայսերն կայսեր եւ զԱս-
տուծոյն՝ Աստուծոյ» (Մտթ. ԻԲ, 21) նախա-
դասութեան ընդգծուած փոխանուն սեռա-
կանները : Այսպիսին է նաեւ էջ 114-ի անգոյ-
-ուքեանցն վերջածանցի գիրկուքեանցն
փոխանուն սեռականը (Ա Մնաց. ԺԶ, 1-2,
Ելք ԻԹ, 28, Ելք. ԼԲ 6) :

Նոյնպիսի մասնիկներից համարելով
-մաց-ը՝ հեղինակն օրինակ է բերել ծովա-
մաց-ը (որը էջ 123-ում -ց ածանցի էլ վկա-
յութիւններից է) . ՆՀԲ-ն գրում է՝ «Ծովա-
մաց կամ Ծովաքաց», որովհետեւ «Ա՛յլ ձ.
ծովաքացս» ունի Գ Մակ. 2, 3-ում :

Նոյնանման մասնիկներից է համարուել
-ն տառն ինչպէս ջերմն, սերմն, կողմն,
նոյնպէս եւ այլն (ցերեկը), գորն, հերուն,
առաւօտն (առաւօտեան), լուսն (լոյսից աչքի
փառ) [որ Արմ-ն ղնում է լոյս արմատի տակ.
ՄՄ.], առանձինն, գառաջինն. Արմ-ում
առաջին երեք բառերի մէջ ածանց է հա-
մարուել -մն, լուսն-ը լոյս-ի տակ է առանց
բացատրութեան եւ իրենից ածանցուածնե-
րում պահում է իր -ն-ն, իսկ միւսներում -ն
տառը պարզապէս յօշ է :

72. «-Ող ներկայ դերբայի ածանցն է,
բայց գերագանցապէս բայախմբից կազ-
մում է ածականներ ու գոյականներ» (էջ
110) . ներկայացուած է ՄԳ-ի ենթակայական
դերբայների մի ցանկ, որ թերի է. չկան
գնոզ, քշմամնոզ, կթոզ, կոծոզ, հակա-
ռակոզ, սպրոզոզ, ստացոզ, -ոզ կամ -օզ ուղ-
ղադրութեամբ. այստեղ էլ դերբայի գործա-
ծութեան հնարաւորութիւնը շփոթուած է
բառի խօսքիմասային պատկանելութեան
հետ. նոյնիսկ արեւելահայերէնի բառարան-
ներում՝ նշուած բոլոր ենթակայական դեր-
բայները ածական կամ գոյական չեն հա-

մարուել : Իսկ ցանկի պատճառով եւ սաղ-
մառով «գոյական կամ ածական» համա-
րուած բառերը ՄԳ-ում ոչ մի տեղ չգտանք :

73. Ականոզիք «աչք» բառը համարուել
է -ոզիք վերջածանցով. կայ ականել դասա-
կան բայը, որով ականոզ-ը կը լինէր ենթա-
կայական դերբայը, որն ստանալով -իք
մասնիկը՝ կազմած կը լինի ականոզիք ածան-
ցաւորը. յամենայն դէպս հեղինակի -ոզիք
ածանցը (էջ 110) պարզ չէ :

74. «-Ոյ ածանցը անշուշտ սեռականի
վերջաւորութիւնն է, որ հետեւեալ բառերի
մէջ մեծ մասամբ դարձել է ածականակերտ
ածանց» (էջ 111) . օրինակներից է այդ (իսկ
էջ 113-ում՝ աջու «ածականը») . ըստ ՆՀԲ-ի՝
այ գոյականի եզ. սեռականն է այդ կամ
աջու, որոնք մնում են որպէս այդպիսին
առանց ածականի վերածուելու : Նոյնը պիտի
ասենք նաեւ ձայնայ օրինակի մասին : Ցան-
կում է նաեւ մտայ «(մ. մօտիկից)», որն
իրականում միշտ ի մտայ է եւ եթէ «մակ-
բայ» է (ՄԳ-ում առնուազն վեց անգամ),
ուստի ածական չէ, այլ իսկական եզակի բա-
ցառական է : Ցանկում է նաեւ եփոյ «սպաս,
սպուր» . եթէ այս իմաստներն ունի, ուստի
ածական չէ. եւ իրօք՝ ՄԳ-ն ունի եփոյին,
յեփոյէ (Դ Թազ. Դ, 38-40) :

75. -Ոյք ածանցի օրինակներից է
«զրկոյք (զրկոյկ)» (էջ 111), որ յատուկ է
միայն յետդասական Յայտնութեան (մի քա-
նի անգամ) . Արմ-ն չունի գիր արմատի տակ.
ինչպէ՞ս կարելի է հաւատ ընծայել այսպիսի
թիւրիմացութիւնների :

76. -Ով «վերջածանցի» տակ (էջ 111)
նշուել են եզակի գործիականի սովորական
ձեւեր՝ լիով, խնամով, կիսով, զշոյով, մեղ-
մով, չափով, փութով, նաեւ տեսանելով,
որոնց խօսքի մասային պատկանելութիւնը
չի նշուել. միշտ նոյն շփոթումը՝ բառի շա-
րահիւսական գործածութիւն եւ բառի պատ-
կանելութիւնը որեւէ խօսքի մասի :

77. «-Ս ածանցով մեծ մասամբ կազմ-
ւում են մակբայներ» (էջ 122) . բացի մի քա-
նի օրինակներից՝ երկիցս, եւս, միւս, ներքս
եւ այլն, որոնք առանձին ստուգաբանու-
թեան են կարօտ, միւսներում այդ -ս ածան-
ցը պարզապէս յոգնակի հայցականի հոլո-
վակերտն է, ինչպէս աւուրս «(օր առ օր)»,
յանձանօթս, յաւիտեանս եւ այլն եւ այլն :

ինչ վերաբերում է ածականներին, ապա յի-
շենք. «Ածականները մակբայ կ'ըլլան (այսին-
քըն՝ մակբայաբար են դործածուում. ՄՄ.)
դարձեալ յոգնակի դրուելով՝ 1. անորոշ
հայցական, եւ 2. ի նախդրիւ հայցական»²¹ :
Եթէ կայ ընդ առաւառս եզակիի իմաստով
(եւ ոչ թէ միայն առաւօտս), օրինակ՝ Մրկ.
ԺԳ 35, ԺԶ 2, կամ ընդ առաւառսն (Յով.
Ը, 2), սակայն կայ նաեւ ընդ առաւառսն
(Մրկ. Ա, 35), որ մեղ ճիշտն է թւում :

Ցանկի ներքս մակբայը թէ՛ այստեղ է եւ
թէ՛ -ֆս -ի տակ (էջ 125) . որի՞ն հաւատալ :

78. -Ք վերջածանցի տակ բերուած բո-
ւոր բառերում, մեծ մասամբ գոյականներ,
-ձ-ն յոգնակի ուղղականի հոլովակերտն է,
որ հայցականում փոխարինուում է -ս հոլո-
վակերտով. այս փաստն ինքնին բաւական էր
հերքելու արտայայտուած դրոյթը : Օրինակ-
ներում են նոյնիսկ բազմաստեղք, արք (որի
իմաստը նշուած չէ), բարձրեցք, մեծա-
մեծք, պատուականք եւ այլն :

79. -Օք -ը վերջածանց է համարուել
մտօք (սրտի մտօք), իրօք, աչօք (առ աչօք),
խելօք, փառօք, օրինօք բառերում, ուր գոր-
ծիականի սովորական հոլովակերտ եւ յոգ-
նակերտ մասնիկներն ունենք : Արդէն ասա-
ցինք, որ ՄԳ-ում օ միջնադարեան տառի
գործածութիւնը աւ-ի փոխարէն անընդու-
նելի է :

Կարելի է ընդհանուր կերպով դիտել
տալ, որ հեղինակի վերջածանց համարած
«մասնիկները» յաճախ այդպիսիք չեն :

ԲԱՐԻ ԲԱՌԵՐ

80. էջ 125-127-ում կրկնաւոր բարդու-
թիւններ են համարուել, երբ մի հոլովածեւ
կամ անփոփոխ խօսքի մաս կրկնուել է ան-
շատ գրութեամբ, ինչպէս ազգ ազգ, ամայ
ամայ, այո այո, ժամանակս ժամանակս,
նակատ առ նակատ, ամ ըստ ամ էւ այլն,
որոնք, ըստ մեզ, բարդ բառեր չեն, այլ բա-
նակապակցութիւններ կամ դարձուածքներ,
որոնցով հարուստ է յատկապէս «Կոչումն
ընծայութեան» գիրքը. «Չա՛ր չա՛ր են մեղք»
(էջ 9), «է՛ է՛ առաջնորդ մեղաց բանսար-
կուն» (էջ 12) եւ այլն :

²¹ Քերականութիւն հայկազնեան լեզուի, էջ 453, Ա կանոն :

ԲԱՅԵՐԸ

81. Հեղինակն իսկական բարդութիւն-
ները չի առանձնացրել ենթավերնադրով.
էջ 129-ի վերջում «Կցական բարդութիւն-
ներ»-ի տակ նշում է. «Իսկական բարդու-
թիւն են» պարտիզայան... ջրհեղեղ (կըրկ-
նուած) եւ այլն, մինչդեռ էջ 122-ում պար-
տիզայան-ը համարուել էր -պան վերջածանց
ունեցող. սրանք ինչո՞վ են տարբեր էջ 129-ի
ոսնրեկ, ոսնկայ եւ այլ կցական համարուած
բարդութիւններից :

82. էջ 134, տ. 3-ում -ա- յօդակապով
բարդ բառերի ցանկում է անհամապատաս-
խան օրէնաւայց-ը :

83. -Ա- յօդակապով «Բարդութեան
առաջին մասում նկատուում է նաեւ անսովոր
հնչիւնափոխութիւն. ինչպէս՝ ֆառամանակ
(փոխն. ֆայռամանակ)» (էջ 134) . Արմ-ն
ֆայռ արմատի տակ գրում է. «Պիտի լինէր
նաեւ *ֆառ (ֆայռ-ի հետ. ՄՄ.)», որոնցից
ֆայռամանակ «մանեակ պարանոցի» Ոսկ.
Երբ. 554, 556, ֆառամանակ Եզեկ. ԺԶ, 11»
եւ այլն :

84. «Բերուած բառերի առաջին բա-
ղադրիչները գոյականներ են, իսկ երկրորդ
բաղադրիչները բայարմատներ են» (էջ 137),
սակայն դրանցում է նաեւ գորագլուխ (էջ
136) . իսկ փ՞նչ ասել կառապան, սենկա-
պան, սոնապան, վանապան, փղապան բա-
ռերի երկրորդ բաղադրիչների մասին, որոն-
ցից վերջին երկուսը էջ 122-ում բերուել են
-պան վերջածանցի տակ : Կամ այս խմբի բա-
ռերից վերամարտիկ-ի մարտիկ բաղադրիչը
էջ 106-ում -իկ վերջածանցի տակ է, իսկ
օտարատնուչ-ը՝ էջ 121-ում -ուչ-ի տակ :

85. Առնդուցիմ բայը (էջ 150) հա-
մարուել է առ- նախաբայն ունեցող, որի
գործածութեան ոչ մի վկայութիւն չի
տրուել. ՆՀԲ-ն այդ բայի բառայօժուածում
ունի առնկալար (Ա Մակ. ԺԲ, 43 եւ Ղուկ.
Բ, 28), անշուշտ ՄԳ 1805-ից, սակայն երկու
տեղերում էլ ՄԳ 1860 եւ ՄԳ 1895-ը ունեն
առ ընկալար, եւ հաւանաբար սա է ճիշտը :
Եթէ հեղինակի ասածը ճիշտ լինէր, ապա
առնդուցիմ-ը երկու նախաբայ՝ առ եւ ընդ,
ունեցած կը լինէր. յայտնի է, որ դասական
գրաբարը խոսասփել է առ նախդրի որպէս
նախաբայ կիրառութիւնից :

86. «Աստուածաշունչը հարուստ է նաև բայական փոփոխականով ... այսինքն միեւնոյն բայը եւ պարզ է եւ ածանցաւոր ... Դիգանեմ-դիգեմ: Եղէզ զչերտսն ի վերայ սեղանոյն (Գ Թադ. ԺԸ, 33): Փոխանակ մեղաց դիգեցի քեզ (Սիրաք Գ, 17): Փաստօրէն դիգեմ չկայ ըստ վերջին օրինակի դիգիմ է (այսպէս՝ առանց կէտադրութեան. ՄՄ.), որ կասկածելի է» (էջ 151): Ըստ էութեան ամէն մի ներգործական բայ կարող է ունենալ իր կրաւորաձեւը (բացի Ի լծորդութեան բայերից) ներկայի կամ կատարելի հիմքով կազմուած ժամանակներում: Բացի այդ՝ ըստ Համարաբառի՝ ՍԳ-ում ունենք. 1) դիգանալ չէզոքը, օր.՝ «Ճենճերն ... ելեալ դիգացեալ ծառանայր» (Բ Մակ. Է, 5), «Դիգանայր բոցն ի վերոյ քան զհնոցն» (Դան. Գ, 47). 2) դիգանիմ չէզոքը, օր.՝ «Ծուխ խընկոյն ելանէր դիգանէր իրբեւ զամպ» (Եզեկ. Ը, 119), «Ծուխն, որ դիգանէր, նշան լինէր գործոյն» (Ա Մակ. Դ, 20), «Եւ ի դիգանել ի վերայ նորա ժողովրդոցն սկսաւ ասել» (Ղուկ. ԺԱ, 29). 3) դիգեալ ներգործական սեռի անցեալ դերբայը, որ կարող է լինել դիգուլ կամ դիգել բայինը, օր.՝ «Թաքոյց զնոսա ընդ խրճամբք կտաւոյ, զոր դիգեալ էր իւր ի տանիս» (Յեսու. Բ, 6), որով մեր ենթադրած բայաձեւերը՝ դիգուլ եւ դիգել, ներգործական սեռի կը լինէին: 4) դիգանեմ ներգործականը, որի եղէզ վկայութիւնը բերուել է հեղինակի կողմից, կրկնուել է Գ Թադ. ԺԸ, 33-ում եւ կարող է նաև դիգուլ ներգործականը ենթադրել տալ: 5) ինչ վերաբերում է հեղինակի մերժած դիգեցի-ին (տե՛ս վերեւում), ապա Փրանսիացի թարգմանիչ Օստին նկատել է տալիս ծան. մէջ, որ (հայերէնում) «զիզեցի քեզ չարն» բառերին համապատասխանող յուն. բնազրի մասը զժուարհասկանալի է. յիշեցնում է Փրանսերէն մի քանի թարգմանութիւններ, որոնց ոչ մէկը չի համապատասխանում հայերէնին: Ազաթանդեղոս (1909 թ.) էջ 260-ում ունենք՝ «Ծուխ այրեցածոյն ելեալ դիգեալ մածեալ զնոքաւք» եւ էջ 383-ում՝ «Բաժանեալ դիգեալ կային ամբաւութիւնք» չէզոքները, ըստ որում դիգեալ-ն այստեղ կարող է լինել դիգուլ չէզոքի կամ դիգիմ չէզոքի դերբայը. նոյնպէս եւ Բուզանդ (1883 թ.), էջ 32՝ «Կուտեալ դիգեալ գմեծութիւն» նախադասութեան դիգեալ-ը կարող է լինել դիգուլ կամ դիգեմ ներգործականների դեր-

բայը (տե՛ս վերեւում թիւ 3-ը): Այսպիսով՝ կայ աւելին, քան դիգանեմ — դիգեմ:

87. «Աշխատեմ նշանակում է աշխատեցնել, տանջել, իսկ աշխատիմ՝ չէզոք բայ է, որ նշանակում է աշխատել, յոգնել, տանջուել» (էջ 152), առանց վկայութեան. ՍԳ-ում մէկ անգամ գտանք «Մի ... եւս աշխատեցեմ զթագաւորութիւնս մեր» (Ա Եզր. Բ, 29), սովորական աշխատ առնել-ի փոխարէն. դա մեզ համար կասկածելի է դարձուածքի առնուազն 15 գործածութեան դերմաց:

88. «Միեւնոյն բայը յաճախ մի խոնարհման մէջ այլ նշանակութեան կամ քերականական կարգի արտայայտութիւն ունի, միևսում այլ» (էջ 152). օրինակներից են՝ աշխատեմ ու աշխատիմ (որոնց մասին խօսեցինք նախորդ գլխաւորութեան մէջ), առաւելիմ ու առաւելում, արածեմ եւ արածիմ, արգելում եւ արգելաւիմ, գալարեմ եւ գալարիմ, բոլորեմ ու բոլորաւիմ, գովեմ ու գովիմ եւ այլն: Կարծում ենք, հեղինակը չփոթում է միեւնոյն բայիմաստի իսկապէս տարբեր լծորդութեան պատկանող բայերը՝ առաւելիմ եւ առաւելում, եւ նոյն բայի, յատկապէս Ե լծորդութեան բազմաթիւ բայերի ներգործաձեւ եւ կրաւորաձեւ խոնարհումները. նոյնիսկ աւելորդ է կանգ առնել երկու կերպ խոնարհումների առանձնապատկութիւնների վրայ ըստ բայախմբերի եւ ներկայի ու կատարելի հիմքերից կազմուող ժամանակների ներգործաձեւ ու կրաւորաձեւ խոնարհումների վրայ: Հեղինակը գիտարարի պէս դրում է. «Ինչպէս երեւում է վերեւում բերուած զուգադիւրներից, միեւնոյն բայը ե խոնարհումով ներգործական է (եթէ բայը ներգործական է. ՄՄ.), ի խոնարհումով չէզոք» (էջ 154): Հեղինակը բայերին խառնում է նաև նրանց պատճառականը՝ «լքանեմ-լքանիմ-լքուցանեմ» (էջ 153), իր դրոյթը հաստատելու համար: Կարելի՞ է ասել, թէ նոյն բայն են գրադիմ եւ գրադում (էջ 153), մէկը պարզ, միւսը ածանցաւոր: Իսկ լիգեմ — լիգանեմ — լիգում օրինակը հակասում է նրա տեսութեանը:

89. «Բունեմ-բունիմ — այս վերջին ձեւը կեղծ ձեւ է, Աստուածաշնչում չկայ, բառարանների նշումը ճիշտ չէ» (էջ 152). սակայն բառարանները, ի մասնաւորի ՆՀԲ-ն չեն նշում, թէ ՍԳ-ում կայ 2-րդը. ՆՀԲ-ն ունի

միասնական բառայօդուածում բունեմ չէզոք եւ բունիմ «ձայնակրական», ըստ որում բունեալք (Երեմ. ԽԸ, 28) եւ բունեաց (Սիր. Ա, 16)՝ բունեմ-ի համար, իսկ յետդասական բնադրերից՝ բունի եւ բունիմ. էլ ինչո՞ւ անպայման քննադատել բառարանները, որոնք լուրջ ՍԳ-ինը չեն. հեղինակն այնքանով է իրաւացի, որ ՍԳ-ում չկայ բունիմ: Նրա քննադատութիւնը տեղին է, երբ ՆՀԲ-ն արգելաւիմ՝ նշում է արգելի՛ր (Եզեկ. Գ, 24) եւ արգելեալ (Բ Մակ. Ե, 8...), որոնք իրօք պատկանում են արգելուլ բայի կրաւորական սեռին:

Հեղինակը դրել է նաև. «Երբեմն բառարանները Աստուածաշնչին վերադրում են այնպիսի ձեւեր, որոնք Աստուածաշունչը չունի ... «Արմատականք» եւ միւս բառարանները բերում են մեղքում իբրեւ մեղքեմ-ին համանիշ, բայց մեղքում բայ չկայ» (էջ 154). մեզ թւում է, որ այստեղ երկու գիտողութիւն կայ: 1) Բառարանները ՍԳ-ին վերադրում են մեղքում բայ. ՆՀԲ-ն միացեալ բառայօդուածում ունի մեղքեմ եւ մեղքում ներգործականները, 2-րդի համար նշելով մեղք կատարեալը. վկայութիւնների բացի երկուսից՝ միւսները դասական եւ յետդասական մատենագրութիւնից են եւ վերաբերում են 1-ինին, ըստ որում եւ կրաւորական սեռի ձեւերով. 2-րդն ունի երկու վկայութիւն, յետդասական շրջանից՝ Խոր. Բ, 82 եւ 7 «մեղքեմ (կամ մեղքում)» եւ Փիլոնից եմեղք: Ուստի ՆՀԲ-ն ՍԳ-ին չի վերադրում մեղքում բայ, որ ՍԳ-ն իրօք չունի: Արմ-ն մեղք արմատի տակ ունի «որից մեղքել կամ մեղքում»՝ ՆՀԲ-ի միայն դասական չորս վերջնական (երեքը ՍԳ-ից) տեղերը յիշատակելով. նրա «կամ»-ը ենթադրել է տալիս, թէ ՍԳ-ն ունի երկու բայաձեւերը. փոքր խմբադրական անդղուութիւն: 2) Ճեղքուլ եղել է, յետդասական:

«Յագիմ-ին զուգահեռ բերում են յագեմ» (էջ 154). հեղինակն իրաւացի է այնքանով, որ ՆՀԲ-ն յագեմում բառայօդուածից յետոյ, որի վկայութիւնները (միայն յագեմ) դասական չեն, ունի յագիմ կամ յագեմում միացեալ բառայօդուածը, ուր ՍԳ-ից էլ վկայութիւններ կան (առանց տեղերի նշման), բայց չկայ մի բայաձեւ, որ յագեմում բայը ենթադրել տայ անվրէպ:

Հեղինակը բոլորովին իրաւացի է երբ գրում է. «Կլանեմ բային համանիշ է բեր-

ում կլնում, որ միայն Յայտնութիւնն ունի, դա ըստ երեւոյթին նոր է» (էջ 154). է՛հ, եթէ «նոր» է, է՛լ ինչո՞ւ մեղադրել բառարանները, որոնք միայն ՍԳ-ինը չեն, դարձեալ ու դարձեալ ենք կրկնում: Ինչպէս երեւում է, գործին չեկած դէպքում հեղինակը դիտել, որ այս թարգմանութիւնը դասական չէ կամ «նոր» է:

Հեղինակն ուրիշ բայերի դէպքում էլ անտեղի քննադատում է բառարանները իրենց բայաշփոթութեան պատճառով: Եզրակացութեան մէջ գրում է. «Աստուածաշնչի համեմատական հրատարակութիւնը, ըստ հին ձեռագրերի տուեալների, շատ այսպիսի կասկածելի ձեւեր կը մաքրի գրաբարից, որով գրաբարի խոնարհման համակարգը աւելի կուռ կերպարանք կը ստանայ» (էջ 155). չենք կասկածում, միայն թէ նախադասութեան «գրաբարից ... գրաբարի» բառին պակասում է առաջին հերթին «դասական» որոշիչը. արդարեւ բառարաններն իրենց վկայութիւնները, օրինակ՝ հեղինակի մերժած հերձանեմ եւ հերձում բայերի համար, փոխանակ հերձում-ի, բերել են ՍԳ-ի վկայութիւնների հիման վրայ:

90. Ամամ բայը Ա լծորդութեան պարզ բայերի ցանկում է (էջ 155), մինչդեռ էջ 151-ում ասուել էր, թէ «Ամենայն հաւանականութեամբ ամամ բայ դոյութիւն չունի»:

91. Ասացինք, որ հեղինակը ՍԳ-ի բառապաշարը բաժանում է բնիկ եւ ոչ բնիկ բառերի եւ դրանք առանձնացնում. այսպէս է նաև բայերի դէպքում: Ա լծորդութեան այսպիսի խմբաւորումից, հնացածները, խոնարհումը փոխաձեւերը, աշխարհաբարում ամանցաւոր դարձածները նշելուց յետոյ գրել է. «Այս բայերից (որոնցից. ՄՄ.) ներգործական են աղամ, ամամ, խոկամ, կարգամ (նաև չէզոք), նիտամ, որսամ (մի բայ չէզոք, որս անել նշան.), տամ, տեղամ: Մնացած բայերը չէզոք են, եթէ չհաշուենք որոճամ, ողբամ, լամ բայերը, որոնք ունեն նաև ներգործական նշանակութիւն» (էջ 156). մեզ համար անհասկանալի մնաց որսամ-ի մասին փակագծերում ասուածը, իսկ տեղամ-ը միշտ ներգործական չէ. կարծում ենք, որ ցանկամ, բամ «ասել» եւ-գգամ բայերը չէզոք չեն: Երկու սեռի է հոգալ-ը, որ չէզոք է համարուել:

92. «Ա խոնարհման պարզ բայերը իբրև կանոն խոնարհում են ներգործակերպ աղալ-աղացի կաղապարով» (էջ 156). պակասում է «անցեալ կատարեալի հիմքից կաղմուած ժամանակներում եւ 1-ին ապառնիում» ճշգրտումը: — էջ 157, ցնծալ բայի «ապառնու առաջին դէմքը կրաւորակերպ է՝ ցնծացայց, իսկ միւս ձեւերը՝ ներգործակերպ... ըստ երեւոյթին Սաղմոսի լերինք ցնծացին պէտք է ուղղուի՝ ցնծացեն (ՃԺԳ 4)»: — էջ 156-ում ողբալը ներգործակերպ անցեալ կատարեալ ունեցողներից է, իսկ էջ 157-ում՝ նաեւ «երկու ձեւով անցեալ կատարեալ» ունեցող մի քանի բայերից՝ ողբալ — ողբացի — ողբացայ. աւելի որոշակի է հետեւեալ կանոնը՝ «Հասարակ բայերուն Բ կարգի ժամանակներն երկու ձեւ ունին: Կրաւորական նշանակութեամբ՝ միշտ կրաւորակերպ կը խոնարհին. բայց ներգործական նշանակութեամբ՝ կրնան նաեւ ներգործակերպ գործածուիլ» (Չալ էջ 91-92):

93. «Իմանալ բայի համար բառարանները տալիս են իբրև եղակի հրամայական իմա՛, իմա՛ց, իմացի՛ր. Չալըխեանը (էջ 98, 99. ՄՄ.) միայն նշում է իմա՛ ձեւը: Ինչպէս երեւում է, դրանք բոլորը ետին ձեւեր են. Աստուածաշունչը ունի միայն իմացի՛ր» (էջ 160), բերում է Առ. ԻԳ 2-ի օրինակը. ՄԳ-ում այս բայով մէկ անգամ է եղակի ձեւով հրաման տրուած՝ իմացի՛ր, սակայն հեղինակը գիտի, որ սա յորդորական հրամայականն է ըստ դրաբարի երեւանեան քերականագիտութեան, թէեւ Չալ-ում համարում է հրամայական՝ լուա՛ կամ լուացի՛ր բուն հրամայականների հետ (էջ 94, 96): ՆՀԲ-ն ունի «Իմա՛ գոր առեմս» առանց աղբիւրի նշման եւ իմա՛ց, որ Եփրեմի «Առ Տիմոթէոս երկրորդ» գործի դասական թարգմանութիւնից է (հատ. Գ, էջ 247-258). ուստի հեղինակի վճիռը յանդուզն է:

94. Եղակի եւ յոգնակի արգելականի կազմութիւնը յայտնի եւ անշեղ կանոն է (մի քանի պակասաւոր բայեր, ինչպէս եմ, արգելական չունեն). սակայն հեղինակն աւելորդաբար եւ առանց նոր բան յայտնելու այս մասին, բացի հետեւեալի նման «գոհարներից», շարունակ յիշեցնում է այս կամ այն բայի արգելականը, որ իւրովի էլ է հասկանում: Գրում է. իմանալ բայի «Արգելականի եղակին չի յիշատակուած, իսկ յոգնակին

միայն՝ մի՛ իմացիք (լուելով լուելիք եւ մի՛ իմասլիք. Ես. 2 9): Նոյն նախադասութիւնը նաեւ՝ Մատթ. ԺԳ 14), կարող է սա նաեւ ապառնի մտածուել» (էջ 160). ոչ թէ կարող է, այլ երկրորդ ապառնի է, ինչպէս պահանջում է յուն. բնագիրը, եւ ինչպէս հասկացել են արդի թարգմանիչները: Հեղինակն այլուր եւս ոչ միայն երկրորդ ապառնու, այլեւ առաջին սպառնու եղակի եւ յոգնակի երկրորդ դէմքերի գործածութիւնը մի՛ մակբայի հետ, որ համազօր է այստեղ ոչ-ին, համարել է արգելական հրամայական, որ անընդունելի է. այսպէս՝ մոռանալ-ի «Արգելականը կանոնաւոր է՝ մի՛ մոռանալ, մի՛ մոռանայք: Միայն ունի նաեւ արգելականի հետեւեալ ձեւերը... մի՛ մոռանայք... մի՛ մոռանայիս... Միայն սրանք պէտք է մանրակրկիտ ստուգուեն ըստ ձեռագրերի» (էջ 161). զուր ստուգում կը լինէր: — Անմիջական շարունակութիւնն էլ հետաքրքրական է. «Ձլանալ — կատարեալի ձեւերը չունի (ՄԳ-ում անշուշտ. ՄՄ.). սակայն արգելականի անկանոնիկ մի ձեւ ունի. մի՛ զլացիս զլարձս տնանկին (Օրէն [այսպէս. ՄՄ.] ԻԳ 14): Գուցէ այս դէպքում մի՛ն պէտք է չ-ով արտայայտենք. չզլանաս» (էջ 161). աւելորդ է յիշեցնել, որ դասական գրաբարում (ինչպէս այսօր Փրանսերէնում) ապառնին կարող է կամք կամ հրաման արտայտել առանց հրամայական եղանակ դառնալու ըստ քերականութեան: Արգելականի, բուն հրամայականի եւ յորդորական հրամայականի շփոթումներ կան նաեւ էջ 169, 179, 184 եւ այլուր:

95. «Ուրանալ բայը շեղում չունի. ուրացայ, ուրացայց, եղակի հրամայականը չի նշուած, իսկ յոգնակին ուրացարո՛ւք է: Արգելականը չկայ» (էջ 160). խօսքն իհարկէ Աստուածաշունչում գործածութեան մասին է, ուր ուրացարո՛ւք ձեւը միայն երկու անգամ կայ (ըստ Համարաբառի) եւ անցեալ կատարեալի յոգնակի 2-րդ դէմքն է. «...Չոր դուքն մատնեցէք եւ ուրացարո՛ւք... Դուք զՍուրբն եւ զԱրդարն ուրացարո՛ւք եւ խնդրեցէք այր մի մահապարտ շնորհել ձեզ» (Գործք Գ, 13-14), եւ այսպէս է թարգմանուել արդի թարգմանիչների կողմից:

96. «Լուանալ բայը անկանոն է. ըստ ա խոնարհման ածանցաւոր բայերի այս բայի անցեալ կատարեալը պէտք է լինէր լուացայ,

բայց լուացի է: Չարմանալիօրէն կայ նաեւ՝ այսպիսի օրինակ եւ այն էլ Առակաց դրբում: Չելս անձին իւրոյ ոչ լուացալ (փոխն. լուաց. Առ. Լ 12): Լուացայց (այս նշանակում է, որ կատարեալը լուացայ է) սրբութեամբ զձեռս իմ (Սաղմ. ԻԵ ՀԲ 13): Եղակի հրամայականը լուա՛ է, յոգնակին՝ լուացի՛ք, միւս ձեւերը չկան» (էջ 161): Սա թիւրիմացութիւնների մի շարան է: Լուանալ ներգործական բայի ներգործածեւ եւ կրաւորածեւ կանոնաւոր (եւ ոչ թէ անկանոն) խոնարհումներն ամբողջութեամբ իբրև նմուշ տրուել են Չալ էջ 93-97, եւ էջ 98-ում ասուել է, որ դրա պէս են խոնարհում ներգործական սեռի մերկանալ, բանալ, քանալ եւ բառնալ ածանցաւոր բայերը: Հեղինակն էլ ըստ այսմ իր Գրաբարի հոլովումը եւ խոնարհումը (Երեւան, 1945) էջ 46-47-ում դրել է, թէ կրաւորակերպ խոնարհման «Բացառութիւն են կազմում՝ լուանալ — լուացի, բանալ — բացի, թանալ — թացի, բառնալ — բարձի, մերկանալ — մերկացի, որոնք ունեն երկու կերպի խոնարհումն էլ. երբ ներգործական են խոնարհում, ունեն ներգործական նշանակութիւն, իսկ երբ կրաւորակերպ են խոնարհում՝ ունեն կրաւորական նշանակութիւն». տե՛ս նաեւ Ա. Ա. Աբրահամեան, Գրաբարի ձեռնարկ (1976, էջ 137): Համարաբառը ցոյց է տալիս, որ ձեւակերպուած կանոնը ճիշտ է լուանալ բայի համար. հեղինակը նշել է լուացալ «բացառութիւնը» փոխ. լուաց-ի: Բերուած «Չելս անձին իւրոյ ոչ լուացալ» (Առ. Լ, 12), «այն էլ Առակաց դրբում», որից Մաշտոցն սկսել է իր թարգմանութիւնը, բերուած է նաեւ Չալ էջ 240-ում Ե կանոնի համար, որ յիշեցրինք մեր 18-րդ դիտողութեան մէջ, որ անպայման տե՛ս: Այսպիսով՝ լուանալ բայի անցեալ կատարեալը ներգործակերպ կամ լուացի... է, երբ ներգործական սեռի է, եւ լուացայ... կամ կրաւորակերպ է, երբ կրաւորական սեռի է կամ ուղիղ խնդրով անդրադարձ է: Ըստ այսմ յոգնակի հրամայականը լուացի՛ք է առաջին դէպքում, լուացարո՛ւք՝ երկրորդ դեմքում: Հեղինակի նշած լուացի՛ք-ը (որ տրված պարզներում շեղւոյ չունի), պարզապէս 2-րդ ապառնի է (ինչպէս ապառնի է արդի թարգմանութիւնների մէջ) եւ մէկ անգամ է գործածուել ըստ Համարաբառի, որ հեղինակը չի մատնանշել. «Լուացիք զհանդերձս յա-

ւորն եւթներորդի եւ սուրբք լինիլիք եւ ապա մտանիցէք ի բանակն» (Թիւք ԼԱ, 24): Հեղինակի տուած լուացայց գայթակղիչ վերայութեան ստոյգ աղբիւրն է Սաղմ. ՀԲ, 13, առանց ԻԵ-ի: Աստուածներին է վերաբերում նաեւ հեղինակին դժուարութիւն յարուցած մերկանալ բայը (էջ 161), որ ուղիղ խնդրով ունի կրաւորածեւ անդրադարձ մերկացայ, մերկացալ եւ մերկացան, բայց եւ ներգործածեւ մերկացից, մերկացես, եւ զուր է նոյն տեղում Չալ-ին քննադատելը, թէ անցեալ կատարեալը մերկացի է սովորեցնում:

97. «Ն խոնարհման բայերը» վերնադրի (էջ 162) հինգերորդ ենթաբաժնի խորագրին է «Այնպիսի բայեր, որոնց խոնարհումը ըստ Աստուածաշնչի անորոշ է Ե եւ Ի խոնարհումների միջեւ» (էջ 166): Քանի որ ա-ն ենթաբաժնիներում հեղինակը խօսում է Ե խոնարհման պարզ բայերի մասին, ուստի նշուած ենթավերնադրում պակասում է «պարզ» բառը. եւ իրօք, տրուած բոլոր «անորոշ» խոնարհման օրինակները պարզ բայերի են: Միւս կողմից՝ եթէ տրուած բայերի խոնարհումն «անորոշ» է, ուստի ինչո՞ւ ղենել Ե խոնարհման տակ եւ չառանձնացնել: ՄԳ-ից իրենց բնադրային ձեւերով (եւ ոչ անորոշ դերբայի կամ ներկայի եզ. 1-ին դէմքի ձեւով) հեղինակի հաշուով բերուած են 133 բայաձեւ, մեծագոյն մասամբ անցեալ դերբայներ՝ ներկայի հիմքից, մի քանի անցեալ անկատար եւ անորոշ դերբայ (նլ վերջաւորութեամբ): Այստեղ «առագաստեալ (կչ)» (էջ 166), որը, սակայն, էջ 162-ում Ե խմբի պարզ բայերի ցանկում է (էջ 162). այսպէս կարգում ենք՝ բարբաբէի «ժամանակ չունենալ» (էջ 166) եւ բարբաբեմ «ժամանակ դտնել» (էջ 168, հակասական երկու թարգմանութեամբ), գահակեալ (չ.) (էջ 167) եւ գահակեմ (էջ 168), ըստ որում բնագրում՝ «լարս գահակեալ» (Թուղթ Բարուքայ), որ ՆՀԲ-ն թարգմանում է «յն. չուրջ եղեալ» (Գահակեմ), առանց գլուխը նշելու, եւ մենք բնագրում չգտանք, Համարաբառը չունի: — Անհասկանալի է, թէ ինչո՞ւ ցանկում է (էջ 167) յանգապեալ-ը. ՆՀԲ-ն ունի «Յանգապեալի, տ. Անգապիլ, Անգապանալ»՝ Ելք ԼԲ, 18-ի յանգապեալ-ի վկայութեամբ: — Ցանկում է նաեւ (էջ 167) տնկեալ (կ.) անցեալ դերբայը, մինչ ՄԳ-ն ունի տնկեմ ներգործականի բազմաթիւ ձեւեր եւ տնկիմ կրաւորականի կամ չէգոքի մի քանի վկայութիւն-

ներ, որոնցով կարելի է որոշել տնկեալ-ի բայը. «Որ տնկեալ է» (Սաղ. Ա, 3), «Տնկեալք եղիցիք» (Սաղ. ՂԱ, 14), «Ուրեմաց եւ տնկեալք ի ծովու» (Ղուկ. ԺԷ, 6), որով զատուում են կրաւորականները: — Ցանկում է նաեւ (էջ 167) կուտակեալ (չ.), որ Համարաբարուում չկայ, իսկ ՆՀԲ-ն կուտակեմ ներգործական բայի բառայօրուածում ունի նաեւ հետեւեալ վկայութիւնները իր «Իսկ կ. իբր ձ.» դիտողութեան համար «Իբրեւ զծով ալեաւք կուտակեալ (Ես. ԺԷ, 12)», «Իբրեւ զնաւ սահել ի վերայ ջուրց կուտակեալ» (Երեմ. ԽԶ, 7), ուր, պարզ է, անցեալ դերբայը չէզոք սեռի է, ի տարբերութիւն հետեւեալ ներգործականի. «Իբրեւ զգետս կուտակեալ ջուր զջուրք» (Իմ. Ե, 10). նաեւ՝ Ազաթանգեղոս (1909, էջ 1) «Ալիք... կուտակիմ». պարզ է, որ կայ կուտակեմ ներգործական սեռի բայը, որը կարող է կրաւորական սեռի իմաստ արտայայտել Ի խոնարհչող, ինչպէս Ե լծորդութեան ներգործական սեռի միւս բայերը. ՆՀԲ-ն է «մեղաւոր», որ առանձին գլխաբառով չի դրել կուտակիմ բայը. արդէն ասել ենք, որ մեր հեղինակը աղօտ պատկերացում ունի Ի լծորդութեան բայերի մասին:

98. «Ե խոնարհման բայերը խոնարհուում են գործեմ-գործեցի... կաղապարով» (էջ 168). պիտի ասուէր որոշակիօրէն՝ «...պարզ բայերը»:

99. «Կերայ բայը ունի հրամայական կե'ր, կերայ'ք, բայց շատ աւելի տարածուած է կերիքի'ք... կերիքի'ք» (էջ 169). կերիքի'ք բնագրում պարզապէս 2-րդ ապառնի է եւ շեշտ չունի (հեղինակը նշել է Ծնն. ԺԸ 5), իսկ կերիքի'ք-ը յորդորական հրամայական է:

100. «Լսեմ... արգելականը մի' լսեք, մի' լսէք, եթէ չհաշուենք Աստուածաշնչի համար սովորական ձեւ դարձած մի' լսիցես — մի' լսիցէք. կայ նաեւ մի' լուիցես» (էջ 169). դարձեալ 1-ին եւ 2-րդ ապառնին խոնուել են արգելականի հետ: Կամ յորդորականը՝ բուն հրամայականի հետ. «Հըրամայականի համար սովորական ձեւ է նաեւ լուիքի'ք, լուիքի'ք» (ն. տ.). իսկ լու'ք-ը, որ Սաղմոսների եւ Առակների համար սովորական է, չի յիշատակուել:

101. «Դատեմ բայը պակասաւոր է. ունի երկրորդ ապառնու երկրորդ, երրորդ դէմքերը, եղակի հրամայականը, անցեալ կատարեալի եղակի երրորդ դէմքը. մնացած բոլոր ձեւերը վերցւում են դատիմ կանոնաւոր բայից, որը ե'ւ կրաւորական է, ե'ւ ներգործական» (էջ 169-170). մեզ համար դիտական է հետեւեալը. «Հասարակ բայերէն՝ դատեաց եւ դատեցաւ, որաց եւ որացաւ, եւ այլն, ընտիր են կրաւորակերպները» (Չալ էջ 124):

102. Զգածնում բայի մասին խօսելիս հեղինակը բերել է լեզուարան Գր. Ղափանցեանի կարծիքը եւ դրել. «Ընդունելով պրոֆ. Ղափանցեանի այս խորամիտ բացատրութիւնը՝ պրոֆ. Էդ. Աղայեանը հաստատում է...» (էջ 177), եւ ճիշտ երկու տող յետոյ՝ «Մեյէի այս կարծիքը Աղայեանը հաստատում է նոր քննութեամբ». որտեղի՞ց որտեղ մեր ընդգծած անունը:

103. «Գրաբարում է խոնարհոււմը անբարձրակամ բայերի խոնարհոււմն է, որիմ հակառակ չէզոքները խոնարհուել են ի-ով եւ ա-ով» (էջ 179). նշանկում է՝ ի եւ ա խոնարհման բայերը չէզոք են, իսկ Ու լծորդութեան մասին խօսք չկայ. հեղինակն անում է անհիմն հաստատում, եւ տե'ս լոկ նրա էջ 165-ի «Ե խոնարհման պարզ երկսեռ բայերը» ցանկը եւ նոյն էջում «Ե խոնարհման պարզ չէզոք բայերը»:

104. «Ե խոնարհոււմը կրաւորական բայեր չունի, սրա կրաւորականութիւնը արտայայտուում է ի խոնարհուումով» (էջ 180). հանրայայտ քերականական ճշմարտութիւն, որ հեղինակը միշտ չի ընդունել զործնականում: Այսպէս՝ երբ շարունակութեան մէջ գրում է. «Աստուածաշնչում կրաւորական շատ բայեր չկան. դուռ կրաւորական բայեր են՝ աղճատիմ, ամբաստանիմ» եւ այլն, այսինքն Ե լծորդութեան ներգործական սեռի բայեր, որոնք զործածուել են կրաւորական սեռով, բայց ի բնէ կրաւորական բայեր չեն: Անհասկանալի է նրա «զուտ» որոշիչն այս դէպքում: Օրինակ՝ ՍԳ-ում ամբաստանեմ ներգործական սեռի բայը զործածուել է թէ' այս սեռով եւ թէ' կրաւորական սեռ արտայայտելու համար Ի խոնարհչող, սակայն սա բաւական չէ, որպէսզի ամբաստանիմ-ը, աւելի ճիշտ ամբաստանեալ-ը՝ «Զոր գատի

ամբաստանեալ վասն խնդրոյ իրիք» (Գործք ԻԳ 28-29), Ի լծորդութեան բայ համարուել բառարանում կամ բայերի ցանկում: Նոյնը պիտի ասենք նաեւ էջ 181-182-ի «Ի խոնարհման պարզ չէզոք բայեր»-ից շատերի մասին. այսպէս՝ ցանկում է Եփիմ-ը, սակայն ՍԳ-ում կայ նաեւ Եփեմ ներգործականը, որ բառարանայինն է որպէս գլխաբար. բառարանները աւելորդ են համարել Ե լծորդութեան ներգործական ամէն մի բայի կրաւորականն էլ առանձին գլխաբառ համարել: Նոյնը պիտի ասենք նաեւ էջ 182-ի «Երկսեռ կրաւորական չէզոք բայեր»-ի ցանկի մասին՝ այրեմ — այրիմ եւ այլն: Այս հարցը կապուած է սեռի քերականական ընդհանուր հասկացութեան հետ բայերի մէջ: Հեղինակը դուցէ արդարանայ, որ «խոնարհում» բառն է զործածել:

105. «Արեւելահայերէնը ի խոնարհոււմը չի ժառանգել, իսկ արեւմտահայերէնը բոլոր չէզոք եւ կրաւորական բայերը դրսեւորում է միայն ի խոնարհիչով» (էջ 183). դարձեալ յանդուգն արտայայտութիւն. ի՞նչ մտնել-ը, հազնիլ-ը, ի՞նչ Ա եւ Ու լծորդութիւնների բայերը:

106. «Ան ածանց ունեցող» ի խոնարհման բայերի ցանկում (էջ 184) կան՝ ելանիմ, որ անդոյ է, ընդմտանել, որի միակ ձեւը ՍԳ-ում ընդմտեալ է (Եփես. Բ, 2), եւ դժուար թէ Ի խոնարհման պատկանի, տանիմ, որի ածանցը —ան— չէ Արմ-ում, եւ բառի ստուգարանութիւնն էլ յայտնի չէ, իսկ տար-ը համարուում է «արմատի երկրորդ ձեւ»: Այս ցանկում են նաեւ ըստ պահանջի Ի խոնարհիչն առած Ե լծորդութեան ներգործական սեռի բայեր: — Ածանիմ «մէջքը կապել» հաստատ գոյութիւն չունի ՍԳ-ում, այլ կայ՝ «Զգեցաւ Տէր զաւրութիւն, ընդ մէջ իւր ածաւ» (Սաղ. ՂԲ. 1), որ ածեմ ներգործականի կրաւորականն է, մեր հեղինակին խորթ թուացող (տե'ս մեր դիտ. 18): Չէ՞ որ այլուր ինքն էր մեղադրում բառարաններին, թէ անդոյ ձեւեր են ըխեցնում որոշ բայաձեւերից:

107. «Ու խոնարհման պարզ բայերը անբարձրակամ են, իսկ ածանցաւորները՝ չէզոք» (էջ 186). իսկ եթէ պարզերը կրաւորական սեռի իմաստով զործածուած լինեն, ե՞նչ սեռի են հեղինակի կարծիքով. բացի

այդ՝ նա էլ 187-ում նշում է ածանցաւորներ, որոնք իր ասելով կա'մ ներգործական են, կա'մ «ներգործական եւ կրաւորական», կա'մ «ներգործական, կրաւորական եւ չէզոք», կա'մ «կրաւորական եւ չէզոք», ամբողջը ութ բայ, քերականական բուն սեռը խառնելով այս կամ այն սեռին, աւելի ճիշտ՝ ուղիղ խնդրով եւ առանց դրան զործածութեան հետ. հաւանաբար աւելի ճիշտ կը լինէր զործածել «նշանակութիւններով», ինչպէս հեղինակն ասում է էջ 186-ում Ու «խոնարհման» պարզ բայերից ոմանց համար, կամ «իմաստներով»:

108. էջ 186, Ու լծորդութեան պարզ բայերի ցանկում է հանում բայը, որի մասին, սակայն, մի քանի տող յետոյ կայ հետեւեալ դիտողութիւնը. «Հանար (ոսկերօք եւ ջլօք հանար դիս. Յովք Ժ 11), ձեւից ենթադրուում է հանում, որ կասկածելի է. կամ դա մի ուրիշ բայ է եւ կամ հանելիք պէտք է լինի (հիւսէիր)» (էջ 186). ՆՀԲ-ն հանուլ բայը (Յորի միակ այս վկայութեամբ) յղում է հեմուլ-ին «հիւսել, ոստայնանկել»: Ըստ Արմ-ի՝ հէն «հիւսել, հիւսուածք» արմատից ունենք հիմել, ըստ որում «աւելի հին ձեւեր են հեմուլ... որի ռամկականը համարուում է հեմել... եւ հանուլ Յոր. Ժ. 11, Կոչ. 156, 224. ըստ այսմ արմատը ներկայանում է հայերէնի մէջ հէն, հեմ, հան ձեւերով»: Ուստի միանգամայն անտեղի է հեղինակի առջարկած Կանելիք (դուցէ՛ հանելիք) բայաձեւը. թարգմանել է Յուն. բնագիրը ենթադրել է տալիս «հիւսեցիր, ոստայնանկեցիր» իմաստը, որին համապատասխանող հայերէն ստոյգ ձեւը (Արմ-ի նշած ձեւերից) կը որոշուի քննական հրատարակութեան մէջ:

էջ 187-ում կայ «գոգչէք (ասել)», որ պիտի լինի գոգէ'ք. կայ գուցե, որ ուղղելի է գուցէ:

109. Պատճառական բայեր. բերուել է ցանկը (էջ 187-189). ոչ մի խօսք չի ասուել այն մասին, որ սրանք սովորաբար կազմուել են ՍԳ-ում զործածուած ոչ պատճառական բայերից, ինչպէս բազմիմ — բազմեցուցանել, իսկ ուրիշներ զործածուել են միայն պատճառականի ձեւով, ինչպէս ազնուացուցանել, իսկ ոմանց էլ սովորական բայը դուցէ եթէ ոչ դասական, զոնէ հինգերորդ դարի հայերէնում էլ չի զործածուել,

որպիսին է հաւանաբար անդրանկացուցանելը, որի վկայութիւնը ՆՀԲ-ում Շնորհալուց է, բայց այս հանդամանքը անհերքելի ապացոյց չէ, որովհետեւ բոլոր բայերի համար չէ, որ բառարանը միշտ դասական կամ հնադոյն ձեւն է վկայութիւն ընտրել: Չի ստուել նաեւ, թէ ՍԳ-ում պատճառականները կրաւորական սեռի նշանակութեամբ դործածուել են արդեօք:

Ըստ հեղինակի՝ պատմաաական բայեր կան, «որոնք արդէն գրաբարում էլ աւելորդ կազմութիւններ են, որովհետեւ . . . այնուամենայնիւ դրանց նոր ձեւի պատմաաականները մեր նոր լեզուում չկան եւ մասամբ հնացած են արմատապէս» (էջ 192). այս անսովոր եւ վատ չափանիշով է արտայայտուած սովորաբար հեղինակը «հնացած» բառերի մասին. երկրորդ՝ իրեն աւելի լաւ բառակերտող է համարում, քան մեր առաջին թարգմանիչները, որոնք «աւելորդ կազմութիւններ» են հնարել:

110. «Աստուածաշնչի հնացած բառերը». այս խնդիրն ուղղակի չի կապուած, մեր կարծիքով, Աստուածաշնչի բառապաշարի ներքին ուսումնասիրութեան հետ. աւելի հետաքրքրական կը լինէր նրա բառապաշարի եւ նրան ժամանակակից միւս գրքերի բառապաշարի համեմատական ուսումնասիրութիւնը: Միւս կողմից՝ բառերի հնացածութեան խնդիրը, հնացածութեան չափանիշները եւ այլ յարակից հարցերը կարող են անվերջ վէճերի տեղիք տալ, որովհետեւ չափանիշները տարբեր են շատ անգամ եւ անհատական զնահատման հետեւանք:

Այսպէս՝ հնացած «մի քանի» բառերի ցանկում (էջ 190-193) է ագոխ, որ առանց հնց. նշման է արդի հայերէնի բառարաններում, ինչպէս նաեւ բօք, հանի, մտրուկ եւ այլն:

Մեզ համար անընդունելի է այն միտքը, թէ «Մեր քարգմանիչները Աստուածաշնչի քարգմանութեան ժամանակ հայերէն բառեր ընտրելու մէջ յաճախ խտրութիւն չեն դրել. բնագիրը հայացուի միայն, ինչ գնով ուզում է լինի» (էջ 193), որի համար ոչ մի օրինակ չի տրուել, եւ հակասում է այն գովասանքին, որ հեղինակը շոյալել է էջ 10-11-ում մեր թարգմանիչների լեզուի մասին: Կամ՝ մեր թարգմանիչները յունարէնի կաղապարումով կազմել են բարդութիւններ, «որոնք յաճախ հայերէնի կազմութեան օրէնքներին» (էջ 193) եւ դրա համար հընացել են, ինչպէս ամենահայեաց «ամենատես», անարծաթաւէր եւ այլն: Կամ՝ «Աստուածաշնչում կան նաեւ մի քանի միաւոր անյաջող կազմութիւններ, որոնց համար մեր քարգմանութեան բառեր են» (էջ 196), ինչպէս՝ աղմկութիւն, աներկաթ «անկապանք», արհամարհութիւն, գօտիածու եւ ուրիշ շատեր («մի քանի»-ն կէս էջ ցանկ է, այն էլ «եւ այլն»-ով, էջ 196): «Այդ անյաջող կազմութիւնները բնականաբար չէին կարող յարատեւել», եւ օրինակներէց է նշխարել, իբր «ուտելուց յետոյ մնացորդները (որոշեալ առումով. ՄՄ.) թողնել», այսինքն՝ մնացորդները չուտել, որ ՆՀԲ-ի բացատրութեան աղաւաղումն է՝ «թողուլ մնացորդս (անորոշ առումով. ՄՄ.) ի նշխարաց յետ ուտելոյն», որի վկայութիւնն է՝ «Տո՛ւր ժողովրդեանդ, եւ կերիցեն, զի այսպէս ասէ Տէր՝ կերիցեն եւ նշխարեսցեն: Եւ եղ առաջի նոցա, եւ կերան եւ թողին նշխար ըստ բանին Տեառն» (ԴԹագ. Դ, 43-44): Անհասկանալի է, թէ ինչո՞ւ նշխարել բայը «անյաջող կազմութիւն» է. անշուշտ լուկ նրա համար, որ արդի հայերէնին չի անցել:

Կամ թէ՛ «Մի մասը անյաջող կազմութիւններ են եւ հետաւոր կապերով են արտայայտուած համապատասխան հասկացութիւնը. օրինակ՝ մեկնակազէն, մօտակրտուր, նախանգընդդէմ, քաղցուալից եւ այլն» (էջ 196, ընդգծումը մերն է. ՄՄ.). եթէ հեղինակը շարունակէր իր տնտղումը, հաւանաբար շատ բան պիտի պակասէր «Համայն հին թարգմանութեանց թագուհու» պերճանքից, բայց առաւել եւս պիտի փայլէր այսօր, եթէ վ. Առաքելեանը խմբագրած լինէր մեր թարգմանիչների «անյաջող կազմութիւնները» կամ «յունական կաղապարումները», եւ սրանք այսօր կամ չէին լինի ՍԳ-ում, կամ չէին հնանայ:

Արեւելահայերէնով չսահմանափակուելով՝ հեղինակը ցանկերով նշել է ՍԳ-ի այն բառերը, որոնք կենդանի կամ մեռած են արեւմտահայերէնում. ըստ նրան՝ այստեղ «մինչեւ իսկ այսօր . . . աւելի լայն են դործածուել . . . կենդանի գործածական են» ախաւադիկ, ախաւանիկ, գան, տաղակ «լոր-

ձունք», այսուով, երագ, գանգիտել, գերծուցանել, քանալ, լնուլ, լուցանել եւ շատ ուրիշներ (էջ 197), որոնք քաղուած են անշուշտ 19-րդ դարի կամ 20-րդի սկզբի որոշ գրողների գործերից, որոնք «այսօր» անգործածական ու հնացած են, ինչպէս կարող է նկատուել ամէն մի արեւմտահայ:

ԱՍՏՈՒԱԾԱՇՆՉԻ ԿՐԱԾ ՕՏԱՐ ԱԵՂՈՒԱՌՃԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ

112. «Հայ եւ օտար բանասէրները համեմատել են ասորերէն, յունարէն եւ հայերէն թարգմանութիւնները», որպէսզի ցոյց տան, թէ հայ թարգմանիչը չի կառուցել մէկ լեզուին. նա ընտրել է մէկը կամ միւսը ըստ իր ճաշակի եւ ըմբռնումների» (էջ 211-212). հեղինակն է վերագրում բանասէրներին այսպիսի նպատակ. իրականում համեմատութիւնների միջոցով բանասէրներ փորձել են որոշել հայերէն թարգմանութեան էութիւնը եւ մանաւանդ յունարէն այն ձեռագիրը, որից թարգմանուել է հայերէնը, սակայն որոնումները բացարձակ արդիւնքներ չեն տուել ցարդ: Երբ անհրաժեշտ է իրեն, հեղինակն ասում է, թէ հայերէնը հարգատուութեամբ թարգմանուել է ասորերէնից, յունարէնից, նոյնիսկ երբայերէնից, իսկ այստեղ ճաշակի խնդիրն է խառնում ըմբռնումներով հանդերձ: Նա փաստեր է քաղել Խ. Ս. Գուրեանի «Մեսրոպեան Աստուածաշունչը բանասիրութեան լոյսին տակ» «Հմտալից» աշխատութիւնից (Գահիրէ, 1944, էջ 549-553): Ի դէպ, ինչո՞ւ «մեսրոպեան» եւ ոչ «սահակեան»: «Փաստերն» այն են, որ եթէ հայերէն թարգմանութիւնը այս կամ այն բառն ունի, ապա դա կամ ըստ յունարէնի, կամ ըստ ասորերէնի է՝ հայ թարգմանիչի «ճաշակի եւ ըմբռնման» համեմատ: Օրինակ. «Մատթ. Աւետարանի ԺԳ 4-ում յունարէնն ունի. «Եւ եկին թռչունք եւ կերան զնոսա». հայերէնը ըստ ասորականի աւելացնում է երկնից «թռչունք երկնից» (էջ 212): Եթէ հեղինակը անձամբ քննութիւն կատարէր, պիտի տեսնէր, որ հայ. թարգմանութիւնը յունարէն բնագրի գնոսա յոգնակիլի դիմաց ունի գնա եղակին, չգիտենք ո՞ւմ «ճաշակով եւ ըմբռնմամբ». բացի դրանից՝ ՄԳ 1895-ի ծան. մէջ նշուած է, թէ հայերէն ձեռագրերից «Բագուաք, եկին քոչուսիք եւ կերան գնոսա», այսինքն ճիշտ ըստ յունարէնի, ուր, սակայն, յուն. ձեռագրերը ունեն «եկին», ուրիշներ՝ «եկած»: Մարկոսի Աւետարանի առաջին վեց գլուխների գրաբարից Փրանսերէն մեր բառացի թարգմանութեան ըն-

Ըստ հեղինակի՝ այսօր հնացած բառերից «Շատերը իրենց ժամանակը սպառած են եղել դեռեւս Աստուածաշնչի մեր քարգմանութիւնից էլ առաջ» (էջ 199), եւ տուել է կէս թիւնից էլ առաջ» (էջ 199), եւ տուել է կէս թիւնից էլ առաջ», որի վերջիններն են, ըստ էջ բառացանկ, որի վերջիններն են, ըստ բախտի՝ քահանայապետ, քահանայապետութիւն, քրիստոսեան, քրճագաժ. չգիտենք, թէ հեղինակի այսպիսի խորթանցութիւնը կամ դարաթափանցութիւնը որտեղից է:

Թողնենք նաեւ «Բառագործածութեան յաճախականութիւնը» (էջ 205-211). արձանատուութիւնը» (էջ 205-211). արձանատուութիւնը, որ բոլոր հաշիւները մօտաւոր են, քանի որ բառերը մեծադոյն մասամբ քաղուած են պակասաւոր եւ սխալաշատ Համարաբանից. փաստեր կան, որ սրանում պակասող որոշ բառեր քաղուած են ՆՀԲ-ից:

111. «Մօտաւոր հաշիւներով Աստուածաշնչի բառերի ընդհանուր քանակն է աւելի քան 10000» (էջ 228). միանգամայն ցանկալի էր, որ դրքում տրուէր ընդհանուր բառացանկը, որով կարելի էր շատ բան ստուգել. դրա փոխարէն հեղինակը աշխատութեան «Բառապաշարը» բաժնում ներկայացնում է բազմապիսի բառացանկեր՝ «Համաթողովրդական բառեր», «գրականութեան միջոցով համաթողովրդական բնոյթ ստացած կամ նոր գրական լեզուին անցած բառեր», «արմատական բառեր», «մթազնած հին բաղադրեալ բառեր», «բարբառային բառեր», իրենց բնիկներով, «միւս մնացած բառերով», փոխառեալներով, հնացածներով, դեռեւս կենդանիներով եւ այլն եւ այլն. մի բառ ստուգելու համար մարդ չգիտի ո՞ւր բառ ստուգելու համար «բառ» ասելով հեղինակը նկատի ունի բայերից բացի միւս բոլոր խօսքի մասերը: Բազմազան բաժանումներ ունեն նաեւ բայերը: Բաժանումներն անհրաժեշտ էին իհարկէ, բայց ՍԳ-ի ամբողջ բառապաշարի ընդհանուր ցանկը շատ օգտակար կը լինէր:

112. «Հայ եւ օտար բանասէրները համեմատել են ասորերէն, յունարէն եւ հայերէն թարգմանութիւնները», որպէսզի ցոյց տան, թէ հայ թարգմանիչը չի կառուցել մէկ լեզուին. նա ընտրել է մէկը կամ միւսը ըստ իր ճաշակի եւ ըմբռնումների» (էջ 211-212). հեղինակն է վերագրում բանասէրներին այսպիսի նպատակ. իրականում համեմատութիւնների միջոցով բանասէրներ փորձել են որոշել հայերէն թարգմանութեան էութիւնը եւ մանաւանդ յունարէն այն ձեռագիրը, որից թարգմանուել է հայերէնը, սակայն որոնումները բացարձակ արդիւնքներ չեն տուել ցարդ: Երբ անհրաժեշտ է իրեն, հեղինակն ասում է, թէ հայերէնը հարգատուութեամբ թարգմանուել է ասորերէնից, յունարէնից, նոյնիսկ երբայերէնից, իսկ այստեղ ճաշակի խնդիրն է խառնում ըմբռնումներով հանդերձ: Նա փաստեր է քաղել Խ. Ս. Գուրեանի «Մեսրոպեան Աստուածաշունչը բանասիրութեան լոյսին տակ» «Հմտալից» աշխատութիւնից (Գահիրէ, 1944, էջ 549-553): Ի դէպ, ինչո՞ւ «մեսրոպեան» եւ ոչ «սահակեան»: «Փաստերն» այն են, որ եթէ հայերէն թարգմանութիւնը այս կամ այն բառն ունի, ապա դա կամ ըստ յունարէնի, կամ ըստ ասորերէնի է՝ հայ թարգմանիչի «ճաշակի եւ ըմբռնման» համեմատ: Օրինակ. «Մատթ. Աւետարանի ԺԳ 4-ում յունարէնն ունի. «Եւ եկին թռչունք եւ կերան զնոսա». հայերէնը ըստ ասորականի աւելացնում է երկնից «թռչունք երկնից» (էջ 212): Եթէ հեղինակը անձամբ քննութիւն կատարէր, պիտի տեսնէր, որ հայ. թարգմանութիւնը յունարէն բնագրի գնոսա յոգնակիլի դիմաց ունի գնա եղակին, չգիտենք ո՞ւմ «ճաշակով եւ ըմբռնմամբ». բացի դրանից՝ ՄԳ 1895-ի ծան. մէջ նշուած է, թէ հայերէն ձեռագրերից «Բագուաք, եկին քոչուսիք եւ կերան գնոսա», այսինքն ճիշտ ըստ յունարէնի, ուր, սակայն, յուն. ձեռագրերը ունեն «եկին», ուրիշներ՝ «եկած»: Մարկոսի Աւետարանի առաջին վեց գլուխների գրաբարից Փրանսերէն մեր բառացի թարգմանութեան ըն-

Թացքում նկատել ենք բազմաթիւ տարբերութիւններ հայերէն բնագրի 1895 թ., երկու հին ձեռագրի եւ յուն. նորագոյն քրնական բնագրի միջեւ. որով մի քանի համեմատութեան հիման վրայ չի կարելի ասել, թէ ճաշակի կամ ըմբռնման խնդիր է, երբ Թարգմանուողը սրբազան գիրք է: Մեր ունեցած ոչ քրնական տպագիրները հիման վրայ յայտնաբերուող պակասների կամ յաւելումների պատճառները շատ աւելի խորն են:

Հեղինակը Ո. Գուրեանից փոխ է առել նաեւ այն, թէ «Հայերէնը ըստ ասորերէնի ունի «Յոր ժամ կոչիցէ ոք զքեզ ի հարսանիս եւ ի կոչունս», յունարէնը չունի ի կոչունս (Ղուկ. ԺԳ 8)» (էջ 212): Էջ 13-ում հեղինակն այս նոյն նախադասութեան յաւելումն իբրեւ փաստ էր բերել ցոյց տալու համար, թէ «Յունարէնում բազմաթիւ նախադասութիւններ պակասում են. հայերէնը աւելացնում է կամ աւելի հասկանալի դարձնելու եւ կամ լրացնում է», թէեւ աւելացումը նախադասութիւն չէ, այլ «կամ ի կոչունս» է. այստեղ դեռ չկայ «ըստ ասորերէնի» կամ «ըստ ճաշակի եւ ըմբռնման»:

Հեղինակը Ո. Գուրեանից է բերել նաեւ Ղուկ. է 44-45-ի օրինակը, ուր յուն. ունի «հերով գլխոյ իւրոյ», իսկ հայ.՝ «հերով իւրով», եւ յուն. «օծ գոտս իմ», հայ. «օծ»: Վ. Առաքելեանն առաջինը մեկնաբանում է այսպէս. «Հայերէնը իրականում հետեւում է յունարէնին, բայց խմբագրելով [՝]. հանում է գլխոյ բառը՝ թողնելով հերով իւրով» (էջ 212): Ո. Գուրեանի ձեռքում եղած յուն. բնագիրը, փնչպէս եզրակացնում ենք բերուած օրինակից, եղել է առաջին անգամ 1550 թ. լոյս տեսած «Ընկալեալ բնագիրը» (Textus receptus), որը վերահրատարակուել է 1894-ին F.H.A. Scrivener-ի կողմից, սրբազրութիւններով, եւ այսօր կոչում է KJV յապաւումով: Մա իրօք ունի «իր գլխի մագերով» (կամ «հերով գլխոյ իւրոյ»), որ հայ. որոշ ձեռագրեր էլ ունեն (տե՛ս ՄԳ 1895-ի ծան.՝). սակայն յուն. քրնական եւ համահաւաք բնագիրը՝ E. Nestle-ի *Novum testamentum graece* (վերջին հրատարակութիւնը՝ 1976 թ.) ունի «իր մագերով» կամ «հերով իւրով», ինչպէս հայ. տպագիրները. ուրեմն լոկ «խմբագրելու» խնդիր չէ (որ չէր էլ կարող լինել սրբազան գրքի ղէպքում): Երկ-

րորդ տարբերակը՝ գոտս իմ, Վ. Առաքելեանի կողմից լուսաբանուել է այսպէս. «Հայերէնը հանում է գոտս իմ, որովհետեւ նախորդ նախադասութիւնը վերաբերում է զլխին եւ ոչ թէ ոտքերին» (էջ 212). ճիշտ է, որ մեր նշած յուն. երկու տպագիրներն էլ ունեն գոտս իմ, եւ ըստ ՄԳ 1895-ի՝ «Բազումք, օծ գոտս իմ». հաւանաբար այս երկու բառերը կարեւոր են, քանի որ Յով. ԺԲ 3-ում կարդում ենք. «Մարթա առեալ լիտր մի իւղոյ նարդեան ազնուի մեծազնոյ, աւծ գոտսն Յիսուսի եւ հերով իւրով մաքրէր գոտս նորա». իհարկէ Ղուկ. է 44-45-ում Մարթան չէ օծողն ու սրբողը, այլ «կին մի մեղաւոր»: Աւելացնենք նաեւ, որ յուն. երկու տպագիրներում չկան Գ. Ո. Գուրեանի իբր յուն. բնագիր ներկայացրած «որում շատ թողուցու շատ սիրէ» բառերը, որ հայերէնն էլ ունի: Այս բոլորի մէջ, միւս կողմից, ինչպէս գրում է Վ. Առաքելեանը, իր աղբիւրից քաղելով՝ «Ասորերէնի զանազանութիւնը աւելի մեծ է» (էջ 212), նշելով տարբերութիւնները. ուստի այստեղ հայ Թարգմանիչը չի ընտրել մէկը կամ միւսը ըստ ճաշակի եւ ըմբռնման: Այս եւ այսպիսի բնագրային խնդիրներ կարօտ են ուսումնասիրութեան:

«Հայերէնը գիտական Թարգմանութիւն է. Նոր կտակարանի բաղադատական հրատարակութեան մէջ իբրեւ ծանօթագրութիւններ յաճախ կարդում ենք «ի յունին պակասէ», հայ Թարգմանիչը չէր կարող պակասը լրացնել առանց որեւէ այլ բնագրի» (էջ 212), որն, իբր, ասորականն էր. արդէն մի անգամ նշեցինք, որ հեղինակը սխալ է հասկանում ՄԳ 1895-ի պակասէ բառը՝ «չիք, չկայ, չունի». քանի որ յուն. Նոր կտակարանը բերնագիր է, Թարգմանութիւն չէ, ուստի ասորի կամ հայ Թարգմանիչը որտեղից կարող էր «պակասը լրացնել», մինչդեռ հեղինակը պնդում է, թէ «Դիտուած է, որ հայերէն Աստուածաշնչի այս տարբերութիւնների մեծ մասը գալիս է ասորերէնից» (էջ 212): Անպարտաւոր շարան է նաեւ հետեւեալը. «Հայերէնը նախապէս Թարգմանուել է ասորերէնից, իսկ յետոյ յունարէնից: Իսկ հայ Թարգմանիչները յունարէնից Թարգմանելու ժամանակ ձեռքի տակ են ունեցել ասորական օրինակը եւ սրանից Թարգմանուած հայերէնը, որտեղ որ յունարէնը պակաս է եղել կամ մութ, հետեւել են ասորերէնին եւ լրացրել

նրանով: Ստացուել է մի կատարեալ Թարգմանութիւն» (էջ 212-213):

Յունաբանութիւններ

113. «Աստուածաշնչի հայերէն Թարգմանութեան մէջ անցել են բաւական թուով յունարէն բառեր» (էջ 213): «Յունական փոփոխութիւնները հայերէնում», 916, այբբենական կարգով դրոշմում ենք Հր. Աճառեանի «Հայոց լեզուի պատմութիւն» աշխատութեան երկրորդ մասում, էջ 10-34. Վ. Առաքելեանից էլ բոլոր ղէպքերում պիտի պահանջէինք շատ գործնական այբբենական բառացանկեր: Սրանց փոխարէն այստեղ էլ յունական փոփոխութիւններ կան ժողովրդականացած, արեւմտահայերէնի մէջ մտած, դրաբարում իսկ չժողովրդականացած, ուստի երկու դրական լեզուների մէջ չմտած, ՄԳ-ի մէջ մասամբ բանաւոր խօսքից անցած, նոր դրական լեզուի մէջ վերափոխուած: Ըստ որում այստեղ էլ անհաւատալի են հեղինակի բառագործածութեան վճիռները՝ դրաբարում ժողովրդականացած կամ բանաւոր խօսքին պատկանած բառերի վերաբերեալ:

114. «Մի քանի բառեր առաւելապէս արեւմտահայերէնում են գործածուել, օրինակ՝ դենար, դիդրաքմայ, դենջակ (զոգնոց, սրբիչ), մանրագոր, մեղրապոպ (չամամ), պողատիտ (թղաչիր)» (էջ 214). Դժուար թէ արեւմտահայը իմանայ այս բառերը, յատկապէս մեղրապոպը, որ նշանակում է «չամամ, սեխ, ձմերուկ». իսկ մանրագոր եւ պողատիտ բառերը էլ 214-ում կան նաեւ այն «մի շարք բառերի» մէջ, «որոնք սակաւ են կիրառուել նաեւ դրաբարում, չեն ժողովրդականացել, ուստի չեն անցել նաեւ մեր դրական լեզուի երկու ճիւղերին»:

115. «Մասամբ ժողովրդականացած» (էջ 214) յունական փոփոխութիւններից «Մի քանիսը դրական լեզուին են անցել վերափոփոխութեամբ. դրանք են՝ Լեգեոն, հեգեմոն, ստադիոն, ստոյիկեան, տոմս, ֆարտէս» (էջ 215). սակայն էլ 214-ի բառացանկում չկայ Լեգեոն-ի ոչ մի ձեւ. կայ հեգեմոնիդէս՝ փոքրատառով, իսկ ՄԳ-ի բերնագրում մեծատառով յատուկ անուն է, ինչպէս արդի միւս Թարգմանութիւնների մէջ. «Եթող անդ սպարապետ ի վերայ աշխարհին

զեգեմոնիդէս» (Բ Մակ. ԺԳ, 24). արեւելահայերէնի հեգեմոն «առաջնորդ» բառը ուսական փոփոխութիւն է: էջ 214-ի բառացանկում չկայ ստոյիկեան բառը, թէեւ գործածուել է Գործք ԺԷ 18-ում: Այս ցանկում կարդում ենք ֆարտէզ, որն իբր «վերափոփոխութեամբ» դրական լեզուում դարձել է ֆարտէս, այսինքն՝ գ → ս, սակայն հենց ՄԳ-ն ունի ֆարտէս, որ հեղինակը սըխալ է ընդօրինակել: Իսկ ցանկի տոմս-ը մնացել է տոմս եւ, չդիտենք, ինչո՞ւ «վերափոփոխութիւն» է համարում: — «Յունարէն բառերի վրայ պէտք է աւելացնել նաեւ մի քանի լատիներէն բառեր» (էջ 215), սակայն պակասում է հիմնականը, որ կարդում ենք Հր. Աճառեանի «Հայոց լեզուի պատմութիւն» աշխատութեան Բ մասի էջ 40-ում. «Նրանք փոխ են առնուած ո՛չ թէ ուղղակի լատիներէնից, այլ յունարէնի միջոցով, ըստ որում ներկայացնում են ճիշտ այն ձեւերը, որ կրել են լատիներէն բառերը յունարէնի մէջ». այս ցանկում է դարձեալ էլ 214-ի դեմար-ը, «վերափոխանուած» լեզուով-ը, էլ 214-ի 2-րդ ցանկի սիկարեան «արիկա» բառը:

116. էլ 214-ի երկու ցանկերում յունական փոփոխութիւններ կան, որոնք ոչ դասական Թարգմանութիւն Յայտնութիւն-ից են, ինչպէս՝ այբ կամ ալփա, ամբքովս «սուտակ». եթէ նշուած է այբ-ը (եւ ալփան) որպէս յունական փոփոխութիւն, ապա ինչո՞ւ չչնել նաեւ ֆէ-ն (դարձեալ նոյն ապա ինչո՞ւ չչնել նաեւ ֆէ-ն (դարձեալ նոյն զրբից): Ունենք նաեւ նշուած քիւիմի «մի տեսակ ծառ», որ Արմ-ում «խնկաբեր ծառ, Փրանս. thuya» է եւ չկայ ՄԳ տպագրում, այլ ըստ Յ. Մուրատի «Յայտնութեան» էլ 297-ից է, որի փոխարէն տպագիրն ունի փայտ խնկոյ (ԺԸ, 12). «Հայերէնը Թերեւս-եմի մասնիկով է պէտք կարդալ քիւիմի» (Արմ), որ մեր հեղինակի գրչի տակ դարձել է քիւիմի:

117. Կարծում ենք, որ որոշիչի եւ յատկացուցչի շարադասութիւնը շարահիւսական հարց է, եւ ոչ բառաօճական, որ հեղինակի աշխատութեան առարկան է. սակայն էլ 215-219 նուիրուած են յունարէնի ազդեցութեամբ ՄԳ-ում նախադասութեան այդ երկու անդամների ետադասութեանը. «Թարգմանուող լեզուի՝ յունարէնի հմայքը խիստ դայթակղիչ էր: Թարգմանողը համար բնագրի

այս կամ այն դասաւորութիւնը ոճարանօրէն կարող էր զեղեցիկ թուալ նոր գրի առնուող հայերէնի համեմատութեամբ: Այս է պատճառը, որ Աստուածաշնչի թարգմանիչները շարադասութեան մարզում յաճախ հետեւել են յունարէն բնագրին: Ետագաւ որոշիչը յունարէնում թարգմանչի համար ունեցել է դասական հնչեղութիւն հայերէնի նախադաս որոշիչի համեմատութեամբ» եւ այլն (էջ 215): Մտացածին եւ միամիտ պատճառաբանութիւն, մանաւանդ անհիմն, քանի որ յունարէնում որոշիչը միշտ ետագաւ չէ, ոչ էլ հայերէնում եղել է նախապէս միշտ նախադաս: Նոյնը պիտի ասենք նաեւ յատկացուցչի շարադասութեան վերաբերեալ: Հեղինակն այլուր անչափ է գովում մեր թարգմանիչներին՝ հայերէնի ողով թարգմանելու մտահոգութիւնը, իսկ այստեղ նրանց վերագրում է «յունարէնի հմայքի» տակ հայերէնի ողուն հակառակ շարադասութիւն: Ճիշտ է, որ յատկապէս Աւետարանների թարգմանութեան մէջ թարգմանիչները կարծես աշխատել են պահել բնագրի նախադասութեան շարադասութիւնը, բայց շատ անգամ էլ՝ ոչ. համապատասխանող տեղերը չպէտք է վերագրել ստրկամտութեան, այլ՝ ենթադրել, որ այդպիսի շարադասութիւնը խորթ չի եղել հայերէնի, նոյնիսկ «համաժողովրդական» լեզուի ողուն: Հեղինակի բերած, «փաստերին» կարելի է պատասխանել նոյնպիսիներով, եւ խնդիրը լուծուած չի լինի, եւ այստեղ այդ չէ բուն հարցը:

Երբայարանութիւններ

118. Հեղինակը նկատի է ունեցել երբայական փոխառնուած բառերը եւ ոճերը: Ասացինք, որ նա երբայագէտ չէ. ուստի բոլոր փոխառութիւնները նա հիմնականում քաղել է Հր. Աճառեանի «Հայոց լեզուի պատմութիւն» աշխատութեան Բ մասից եւ Արմ-ից, իսկ «ոճերը»՝ Վիեննայի Մխիթարեանների աշխատութիւններից, սակայն առանց աղբիւրները յիշատակելու, որ տարրական երախտագիտութիւնը պարտադրում է բոլորիս, որովհետեւ բոլորս էլ օգտուում ենք միմեանցից²³: Այս բոլորից բացի՝ նրա

²³ Հեղինակն էջ 226-ում մէկ անգամ միայն գրել է «բոս Այսրենանի», սակայն առանց այլ տեղեկութեան այս մասին: — Հր. Աճառեանի նշուած աշխատութեան էջերն են 54-64, ուր երբայական փոխառութիւնները, որոնք քաղուած են ՄԳ-ից, 138 հատ

երբայարանութիւնները համողիչ կը լինէին, եթէ նա կարողանար բերել երբայերէն բնագիրը յունարէն թարգմանութեան եւ հայերէնին կից, որովհետեւ երբայարանութիւն համարուածները կարող են ասորաբանութիւններ լինել: Ի՞նչ էլ լինի, հաստատ համոզուած ենք, որ հայերէնի երբայարանութիւնների աղբիւրը յունարէն թարգմանութիւնն է Հին կտակարանի համար, յունարէն բնագիրը՝ Նորի թարգմանութեան մէջ:

119. «Յունարէն Աստուածաշնչին են անցել երբայական բառեր, որոնք կամ մասնագիտական կրօնական հասկացութիւններ են, կամ չհասկացուած բառեր են: Նոյնիսկ կան այնպիսի երբայական բառեր, որ այժմեան հրեադէտները բացատրել չեն կարողանում» (էջ 220). բերուած մի քանի օրինակները լուս քաղուած են Արմ-ից Հր. Աճառեանի բացատրութիւններով, որ երբայագէտ չէր, եւ, միւս կողմից, նրանից յետոյ գիտութիւնը կանգ չի առել. արդ՝ Վ. Առաքելեանը փորձել է արդեօք այդ բառերի լուսաբանութիւնը որոնել նորագոյն բառարաններում կամ աշխատութիւններում: Օրինակ է բերուել «Երբայերէն գանգակ բառը յունարէնում դարձել է ձակխո, հայերէնն էլ ինչ որ մի այլ յունարէն ձեռագրի հետեւողութեամբ դարձրել է ֆակխով» (էջ 220). հեղինակն այս բոլորը վերցրել է Արմ-ի ֆակխով բառայօգուածից (թէեւ «Հայոց լեզուի պատմութիւն» գրքի Բ մասի էջ 59-ում գրուած է ֆակխով «սրահ»): պարզում է, որ Նորագիւտ Մնացորդաց ԻԸ 20-ում, իսկ տպ-ում սրահից յոգն. սեռականն է: Արմ-ում յուն. ձեւը չառչած է, որ Վ. Առաքելեանը հայ. տառադարձել է ձակխո: Նոյն աղբիւրից է նրա երգաբ օրինակը (Արմ, երգաբ բառայօգուած):

120. Հետեւելով իր աղբիւր Հր. Աճառեանին (սա էլ ժամանակին հետեւել է ՆՃԻ-ին), հեղինակը որպէս երբայարանութիւններ է ներկայացրել «էլի՛, էլի՛, լա՛մա սարաքանի» (Մտթ. ԻԷ, 46) արամերէն նախադասութեան բառերը (նոյնը Մրկ. ԺԵ, 34), արամերէն ովսաննա բառը (Մրկ. ԺԱ, 9, Յովհ. ԺԲ, 13), դարձեալ արամերէն «Տալիքա՛, կու՛մի» (Մրկ. Ե, 41), եփիպա՛ր են, այբբենական կարգով, երբայերէն եւ յունարէն ձեւերի տառադարձութեամբ: Վ. Առաքելեանը կըրճատել է ցանկը եւ տարողնել ցանկերի մէջ:

(Մրկ. Է, 34). այս բոլորի առկայութեան պատճառն այն է, որ Յիսուս, ինչպէս Բարեւոյնի գերութիւնից վերադարձած հրեայ ժողովուրդը արամեախօս էր դարձել: Ոչ մի ցանկում չգտանք (որովհետեւ այստեղ էլ հեղինակը ցանկեր ունի ըստ այնմ, թէ ՄԳ-ի երբայերէն բառերին ի՞նչ բախտ է վիճակուել արդի հայերէնում, կարծես, թէ դա է զլխաւորը) արամերէն արա բառը: Խօսք չկայ իրօք երբ. Գողգոթա-ի մասին:

121. «Վերելում բերուածներից բացի կան նաեւ այնպիսի բառեր, որոնք պատկանում են տարբեր բնագաւառների, բայց որոնք առաւել եւս չեն հասկացուել ու իրբեւ այդպիսիք փոխ են առնուել» (էջ 222), օրինակ՝ զրեթէ մէկ էջ: Ովքե՞ր չեն հասկացել՝ «70 յոյն գիտնականները» (էջ 221), թէ՞ հայ թարգմանիչները: Վերջիններս հարազատ են մնացել յունարէնին, որի թարգմանութիւնն առաւել դժուար էր յատուկ անունների դէպքում, ինչպէս «Եւ անուոցն անուն կոչեցաւ զԵղիպի (Եղեկ. Ժ, 13), որ յուն. Գելգել Գեղգեղ (Եղեկ. Ժ, 13), որ յուն. Գելգել Գեղգեղ բառի տառադարձումն է: «Չհասկացուած» բառերի ցանկում է կապալաքա, մինչդեռ դա յունարէն բնագրի (եւ ոչ թէ թարգմանութեան) համեմատ է՝ «...ի տեղուջն, որ կոչէր Քարայատակ եւ երբայեցերէն կապալաքա» (Յով. ԺԹ, 13), յուն. Իαββαδα, որի ոչ դասական տառադարձութեան մասին Արմ-ն (կապալաքա) գրել է. «Յայտնի չէ միայն թէ ինչո՞ւ է Եւ Բ տառադարձուած են կ եւ պ. փոխանակ Գ եւ Բ»:

122. «Նախադասութիւնների սկզբում անհարկի եւ շղկապի յաճախութիւնը երբայական ոճ է համարուում, որ անցել է յունարէն Աստուածաշնչին, այնտեղից էլ մերին: Նոյնիսկ յունարէնի յաւելումների մէջ նախական ու պարզունակ այդ և-երը... երբուում են» (էջ 223): Երբայերէնում այդ շղկապն «անհարկի» չի համարուել եւ ունի իր առատութեան պատճառը: Պիտի նկատենք նաեւ, որ Նոր կտակարանում էլ, որ յունարէն է շարագրուել, առատ է: Բայց անընդունելի է, որ հեղինակը հիմնուելով ՄԳ 1895-ի «Յերբայականին պակասէ» տեղեկութեանը Ծն. Ա. 6-ի վերջաւորութեան «Եւ եղեւ այնպէս»-ի մասին՝ այս երեք բառերը համարի «յունարէնի յաւելումներ» եւ նոյնիսկ այս «յաւելման» մէջ և-ի գործածութիւնը երբայ-

յերէնի հետեւողութեամբ ենթադրի, քանի որ այլուր եւս գտնուած ենք «Եւ եղեւ այնպէս», օր. Ծն. Ա. 24-ի վերջում, որի մասին տեղեկութիւն չկայ, թէ «Յերբայականին պակասէ»: Բերուած միւս օրինակներում և-երն իհարկէ «յունարէնի յաւելումների» մէջ չեն:

123. «Եւ շղկապը յաճախ կիրառուում է այլ շղկապների ու յարաբերական որ դերանուն փոխարէն, որ նոյնպէս երբայական լեզուի աղբիւրների հետեւանք է. յունարէնը վերցրել է իրբեւ պատճէնում, որ նոյնութեամբ անցել է մեր Աստուածաշունչը» (էջ 223). տեղեկութեան չյայտնուած աղբիւրն է Չալ էջ 459, ծան. 1՝ «Երբայական ոճով յաճախ է եւի գործածութիւնն, որ ուրիշ շղկապներու եւ յարաբերականներու տեղ ալ կը դրուել», սակայն մեր հեղինակի օրինակը վերցրուում է. «Եւ կացուցից զնա իշխան ի հաւատարիմ տեղուջ Եւ եղիցի յաթոռ փառաց տան հօր իւրոյ» (Ես. ԻԲ, 23). 20-րդ տնից սկսած՝ խօսքը Եղիպիմ Քեղկեայ-ի մասին է. «Եւ եղիցի յաթոռ փառաց տան հաւր իւրոյ» բառերը նորագոյն թարգմանութիւնների մէջ հասկացուել են «իւր հօր տան համար պիտի լինի փառքի մի դահ» (ըստ յունարէնի), իսկ Վ. Առաքելեանը յաթոռ-ը հաւանաբար հասկացել է տեղի պարագայ՝ «աթոռի վրայ», մինչդեռ դա յ- նախդրով հայցական ստորոգելիական վերագիր է. ըստ նրան՝ «Ընդգծուած և-ը որ յարաբերականի փոխարէն է դրուած եւ խորթ է հայերէնին» (էջ 223): Տարրական այսպիսի սխալներ են նաեւ նրա միւս օրինակները, ինչպէս 2-րդը. «Եւ եմուտ (Աբրամ) առ Ագար, եւ յղացաւ» (Ծն. ԺԶ, 4), անչուշտ «որ յղացաւ», որ նման է, իրօք, Չալ-ի «Յարեաւ Թովգա, եւ նա բնակէր ի Սամարիա (փիսկ.՝ որ բնակէր)» օրինակի մեկնաբանութեանը, որին համաձայն չենք: Բարեբախտաբար այսպիսի քերականական մեկնաբանութիւններով չեն առաջնորդուել հին թարգմանիչները. ինչո՞ւ անպայման ենթադրել, թէ սեռական լեզուներով գրողները, ինչպիսիք էին Հին կտակարանի հեղինակները, պէտք է կամ պիտի ունենային հնգերոպական լեզուներով խօսողների լեզուամտածողութեան ձեւերը եւ առաջնութիւնը տային յարաբերեալ երկրորդական նախադասութիւններին: Նոյնը պիտի ասենք նաեւ նախադասութիւնների սկզբի եւ լինէր, եւ եղիցի «թարմատարների» մասին

(էջ 223) . այստեղ հեղինակի չմատնանշած աղբիւրն է Չալ 363 :

Անհրաժեշտ էր նկատել տալ, որ թէեւ Աստուածաշնչի ոճը մեծ ազդեցութիւն է թողել հայ մատենագիրների վրայ, ինչպէս գրել է հեղինակը (էջ 14-15), սակայն վերջիններս չեն որդեգրել երբայարանութիւնները :

124. Երբայական ոճով յաւելում բայի գործածութեան աղբիւրն է Չալ էջ 398, ծան. 1, որ չի նշուել, ինչպէս բոլոր միւսները :

125. «Երբայական լեզուին է յատուկ ամենայն բառի կիրառութիւնը Ոչ մի կապակցութեան նշանակութեամբ ժխտական նախադասութիւնից յետոյ» (էջ 225) . հմմտ. Չալ էջ 287, ծան. 1՝ «Երբայական ոճով՝ բացասական կամ արգելական բայի հետ ամենայն՝ կը նշանակէ եւ ոչ մի», ուր իրաւամբ չի ասուել «ժխտական նախադասութիւնից յետոյ» . օրինակն է՝ «Մի՛ խօսել գամենայն ստութիւն» կամ «Ամենայն բան տգեղ ի բերանոյ ձերմէ մի՛ ելցէ» : Աւելի ճիշտ կը լինէր այս ամենայնը, որ գործածուած է դերանունաբար եւ ածականաբար, թարգմանել «որեւէ» :

126. Հեղինակը երբայարանութիւն է համարել յերեսաց եւ ի ձեռաց բացառականները եւ այս դէպքում ինքնուրոյն է . դրանք չի թարգմանել, բերել է միայն օրինակներ՝ երկուսը յերեսաց-ի համար, որ թարգմանում ենք «առաջից, առջեւից» եւ ոչ «երեսից, պատճառով» (եթէ երբեք այս է նրա մտքինը), մէկը ի ձեռաց-ի համար, որ նշանակում է «ձեռքերից, ձեռքից» (փրկել)՝ «Ապրեցոյց . . . ի ձեռացն իսրայելի» . սակայն քանի որ այս երկուսը կան նաեւ հայ . բարբառներում եւ գրական լեզուում, ուստի «Կարող էին մեր լեզուում եւս յենարան ունենալ» (էջ 225), գրել է հեղինակը :

127. «Երբայարանութիւններ են խնդրել գանձն ուրուք (սպանել), ցաշակել գմահ (մեռնել), առնուլ անուն (անուանի դառնալ) եւ այսպիսի այլ ընդօրինակումներ» (էջ 225) : Մեր ուշադրութիւնը դրաւեց յատկապէս առաջինը . նախ պիտի ասուէր՝ «Երբայական ոճով կ'ըսուի նաեւ ուղղական՝ անձն իմ (ես), անձն նրա (նա), անձնիմ ձեր (դուք)» (Չալ էջ 196, ծան. 1 եւ էջ 251, ծան. 1 եւ այլն) . ՆՀԲ-ն չունի խնդրել գանձն ուրուք «սպանել» նշանակութեամբ, իսկ էմ . Չախջախեանի

բառարանում բացատրուել է, առանց երբայարանութիւն համարուելու, «զհետ լինել ումեք ի սպանանել կամ ի փնասել», որ նոյնը չէ հեղինակի բացատրութեան հետ . ահա մի օր .՝ «Մեռան, որ խնդրէին գանձն մանկան» (Մտթ . Բ, 20) : — Բառարաններում չգտանք առնուլ անուն «անուանի դառնալ», կայ միայն առնել իւր անուն այս իմաստով . հեղինակն աղբիւր չի նշել :

128. «Երբայարանութիւն է նաեւ դնեմ եւ տամ բայեր կիրառել առնեմ բայի փոխարէն» (էջ 225) . լռելեալն աղբիւրն է Չալ էջ 226, ծան. 1, որի «Եղից ղիսաւարն ի լոյս» օրինակը մեր հեղինակի կողմից մեկնաբանուել է՝ «Փոխանակ հայկաբանութեամբ ասելու արարի ղիսաւարն լոյս», բայի ժամանակի փոփոխութեամբ եւ ի նախդրի ջնջումով :

129. «Աստուածաշնչում յաճախ նկատուած է հոլովուած յարաբերականներից յետոյ նոյնահոլով մի այլ դերանուն, որ երբայական յաւելադրութիւն է եւ յատկանիչ ժողովրդական խօսքային յաւելադրութեան եւ հետեւանք դեռեւս չկազմակերպուած խօսքի» (էջ 225) . նոյնը եւ «յարաբերական մակբայներն» էլ ներառնելով՝ Չալ էջ 352, ծան. 1, սակայն առանց հեղինակի մտացածին պատճառարանութեան : Նոյն յաւելադրութիւնը առատ է ասորերէնից կատարուած հայերէն դասական թարգմանութիւնների մէջ, ուստի եւ սեմական լեզուների յատկութիւնն է հաւանաբար : Չալ-ն իրաւամբ յիշեցնում է, որ «Այս յաւելումները քանի մը տեղ բուն հայերէն գրուածոց մէջ ալ մտած են : Կանեփուկն թուի ինչ է, որոյ սերմն նրա դեղ է» (Եղնիկ, 1826, էջ 67) :

130. «Աստուածաշնչում երբեմն դիմաւոր բայի իմաստը ուժեղացնելու նպատակով նոյն բայի անորոշ դերբայը գործիականով վերադրել է դառնում, որ համարուած է երբայերէնի լեզուական յատկանիչ» (էջ 226) . հմմտ. Չալ էջ 404՝ «Երբայական եւ ասորական ոճ է՝ դիմաւոր բային քով (հասարակօրէն նախադաս) իւր աներեւոյթը կցել» . ուստի ոճը կարող է նաեւ ասորական լինել : Նոյն էջում, ծան. մէջ՝ «Ասոր նման երբայական սաստկացուցիչ ձեւեր են կամ զարդ՝ նաեւ անուանց ու բայանուանց յաւելուածները . Արք զօրաւորք զօրութեամբ» եւ այլն :

131. «Երբայական ոճով Աստուածաշնչում միեւնոյն նախադասութիւնը տարբեր բառերով կրկնուած է ու եւ-ով շաղկապուած, որ ուժեղութիւն է տալիս նախորդ նախադասութեանը, եւ բոլորովին նոր ձեւով է՝ արտայայտուած» (էջ 226) . հեղինակը բանաստեղծական այս ոճի մասին խօսում է նաեւ էջ 28-29-ում . ըստ մեզ՝ այս բոլորը կապ չունի լեզուական ոճի հետ, եւ եթէ արտացոլուած է հայերէն թարգմանութեան մէջ եւ-ի շաղկապումով, դա կատարուել է յանուն թարգմանական հարադատութեան, ինչպէս յունարէն թարգմանութեան մէջ (խօսքը Հին կտակարանի մասին է) : Եթէ դա «երբայարանութիւն» պէտք է համարել, ապա նոյնպիսին է այն, որ «Մեծամեծ անձանց հետ խօսուած ատեն շատ անգամ առաջին եւ երկրորդ դէմքի տեղ երրորդ դէմք կը գործածուի . . . Այս ոճը սուրբ Գրոց մէջ յաճախու է» (Չալ էջ 324, ծան. 1), որ Վ . Առաքելեանը չի յիշատակել :

132. «Երբայարանութիւն է նաեւ նախորդ կրկնութիւնը» (էջ 227) իւրաքանչիւր նախորդառու խնդրից առաջ թուարկումների մէջ . անապացուցելի երբայարանութիւն, քանի որ դասական գործերում դա է սովորականը, թէեւ պատահում է, որ մի նախորդ կամ նախադրութիւն միաժամանակ երկու խնդիր ունենայ :

133. «Երբայարանութիւն է համարուած սեռական հոլովով որոշիչը, երբ այս վերջինը թուով կամ հոլովով համաձայնում է իր յատկացուցիչ հետ . օրինակ՝ Չոհեաց զոհս խաղաղակամաց, լուսաւորեցան ջրովը կենդանութեամբ, ձայնիւ հառաչմամբ, ի խորոց պնդողոց երկրէ :

Յարենէ ուտելոց (փոխն . յուտելոյ զարկն) . Երբայարանութիւն է նաեւ նախորդ կրկնութիւնը . օրինակ՝ . . .» (էջ 227) . վերջին երբայարանութեան մասին արդէն արտայայտուեցինք, լուի մէջը երեցինք հեղինակի շարադրանքի ձեւը ցոյց տալու համար . զանք նախորդին : Տղիտաբար խոստովանում ենք, որ այս երբայարանութեան նուազագուծ ձեւը ըմբռնում, թէեւ օրինակներ էլ են տրուել . ո՞րն է սեռական հոլովով որոշիչը եւ ինչպէ՞ս «այս վերջինը», այսինքն որոշիչը համաձայնում է իր յատկացուցիչին . արդեօք յատկացուցիչը-ը պէ՞տք է կարդալ «յատկացեալին» : Յա-

մենայն դէպս 1-ին օրինակի խաղաղակամաց բառը ՆՀԲ-ում (խաղաղական բառայօդուած) որպէս գլխաբառ ունի «խաղաղական, կամ խաղաղակամ . ա . գ . Հաշտարար զոհ փրկութեան՝ վասն խաղաղութեան եւ առողջութեան» եւ տրուած օրինակում դոյականաբար է գործածուել սեռական հոլովով . ՍԳ-ում կայ նաեւ «զոհս խաղաղականս», «ողջակէզս խաղաղականս» եւ այլն : — Հեղինակի միւս երեք օրինակներում նրկատուում են իրենց գործիական կամ բացառական հոլովով դրուած յատկացեալների պէս սեռականի փոխարէն գործիական կամ բացառական հոլովով դրուած յատկացուցիչներ, որոնց մասին Չալ էջ 252, կանոն ժԱ-ում չի ասուել, թէ երբայարանութիւններ են : — Հեղինակի վերջին օրինակը չգրտանք ՍԳ-ում Համաբարբառի միջոցով արիւն կամ ուտել բառերի տակ, եւ նպատակը մեզ համար մութ է մնում :

Չալ-ում Ար . Այտընեանը տողատակերում յիշատակել է ուրիշ «երբայարանութիւններ», որ Վ . Առաքելեանը չի նկատել կամ չի ուղեցել յիշատակել . էջ 265, ծան. 1՝ «Երբայեցի ոճով՝ Քաղցր ի վերայ ամենեցուն : ի վերայ տառապելոյ երկայնամիտ լեր» . էջ 334, ծան. 1՝ «Երբայեցերէն ոճով կը կրկնուի» ստացական ածականը կամ սեռական հոլովով անձնական դերանուն յատկացուցիչը յատկացեալների մօտ . «Ինքն աստի արբ, եւ որդիք նրա եւ խաչինք նրա» . էջ 445, ծան. 2, նոյնը՝ «Թաթահատք ի ձեռաց եւ յոտից իւրեանց . . . իւրեանց այստեղ երբայական կամ ասորական յաւելուած է, որ յաճախ կը տեսնուի սուրբ Գրոց մէջ» : Հ . Թաղ . Թոռնեանն էլ է նշել երբայարանութիւններ իր «Հատընտիր ընթերցուածք»-ի այն հատուածներում, որոնք Աստուածաշնչից են առնուած, օր .՝ հատ . Բ, էջ 396, ծան. 5, 404, ծան. 11, 13 :

Ասորերէն բառեր

134. Փոխառութիւնների ցանկը եւ հայերէն գրական լեզուում կամ բարբառներում նրանցից ոմանց գործածութեան մասին տեղեկութիւնները գտնում ենք Հր . Աճառեանի «Պատմութիւն հայոց լեզուի» աշխատութեան Բ մասի՝ էջ 336-355-ում, ուր տրուած են նաեւ ասորերէն բառերի տառադարձութիւնները :

Մեր եզրակացութիւնը

Մի հայ լեզուաբան, որի գրաբարի վերաբերեալ աշխատութեան մասին դիտողութիւններ էինք հրատարակել, անձամբ մեզ հարցրեց. «Ուրեմն իմ գրքում դրական բան չկա՞ր»: Վարազ Առաքեալեանի այս աշ-

խատութեան մէջ կան դրական եւ ճիշտ բաներ, բարեբախտաբար, որոնք արդիւնք են երկարատեւ աշխատանքի, սակայն մենք աւելին էինք սպասում նրա մակարդակի մի հայերէնագէտից:

ՄԱՐՏԻՐՈՍ ՄԻՆԱՍԵԱՆ
Ժննդի համալսարան

ՄԱՐԿՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԻ ԼԻԱԿԱՏԱՐ ՀԱՄԱԲԱՐԲԱՌ

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ ԵՐԿՈՒ ՀԱՄԱԲԱՐԲԱՌ

Նոր կտակարանի դասական գրաբարով թարգմանութեան երկու համաբարբառունենք՝ Համաբարբառ կամ ցանկ նմանաձայն բառից Նարոյ Կոտակարանի, Իզմիր, 1848, հեղինակն անյայտ, եւ Համաբարբառ Հին եւ Նար Կոտակարանաց, Երուսաղէմ, 1895, հեղինակ՝ Թադէոս վարդապետ Աստուածատուրեան. սրանք երկուսն էլ ամէն տեսակէտից թերի եւ անբաւարար գործեր են մանաւանդ մեր օրերում, երբ ուշադրութիւն է դարձում Ս. Գրքի ոչ միայն գաղափարական բովանդակութեան, այլեւ դասական լեզուի եւ ոճի վրայ: Քանի որ առաջինը խիստ հազուադէպ ու միայն Նոր կտակարանի համաբարբառն է, ուստի ամենից շատ գործածուողը լիակատար Աստուածաշնչինն է: Սա ունի սկզբունքային եւ կատարողական թերութիւններ:

Երուսաղէմի համաբարբառի սկզբունքային երկու թերութիւնները հետեւեալներն են: Հետեւելով յունարէն, լատիներէն կամ եւրոպական լեզուներով Ս. Գրքերի համաբարբառների օրինակին՝ հեղինակը չի գրանցել երկրորդական համարուած բառեր՝ դերանուններ, շարժականներ, որոշ մակբայներ, նախդիրն ու նախադրութիւնները, յօգերը, մինչեւ իսկ շատ գործածական ասել բայը եւ ուրիշ բառեր: Երկրորդն այն է, որ եթէ նոյն բառը նոյն տան մէջ երկու կամ երեք անգամ է գործածուել միեւնոյն կամ զանազան ձեւերով, ապա դրանցից միայն մէկն է գրանցուել, ինչպէս յայտնել է հեղինակն առաջարանում:

Այս համաբարբառն ունի կատարման թերութիւններ, որոնցից գլխաւորը բառերի գործածութեան պակաս նշումներն են, յաճախ էլ գլխահամարների, տնահամարների եւ հեղինակների անունների սխալներ են նրկատում, ինչպէս նաեւ սխալ ընդօրինակութիւններ: Հրատարակութիւնը յետմահու է,

ինչպէս ծանուցուած է նախարանում: Թէկուզ Մարկոսի աւետարանի մէջ այս եւ այլ թերութիւնների մատնանշումը եւ սրբագրութիւնը մեր նպատակից դուրս են եղել: Կարելի է միայն հիանալ, որ մէկ անձ կարողացել է գլուխ հանել այսպիսի հսկայական մի աշխատանք, որն առաջին հայեացքից դիւրին է համարում, բայց տաղտկալի է, յոգնեցուցիչ, փորձութիւններով լի, մեծ ուշադրութիւն եւ լարուածութիւն պահանջող, ստուգում եւ վերստուգումներ պէտք է իրար յաջորդեն, եթէ ուզում ենք անթերի արդիւնքի հասնել. դրանք առաւել եւս անհրաժեշտ են, երբ մարդ մենակ է աշխատում:

ՄԵՐ ԿԱԶՄԱԾ ՀԱՄԱԲԱՐԲԱՌԻ ԲՆԱԳՐԱՅԻՆ ՀԻՄՔԸ՝ ՍԳ, 1895, ՊՈԼԻՍ

Ինչպէս յայտնի է, գոյութիւն ունեն Ս. Գրքի երեք գլխաւոր եւ որակաւոր հրատարակութիւն. Հ. Յ. Զոհրապեանի հրատարակութիւն մեծադիր մէկ եւ փոքրադիր չորս հատորով, Ս. Ղազար, 1805, որի էջատակում նշուած են 5—6 ձեռագրի տարբերութեցուածներ. բնագրի տեսակէտից սրանից աւելի կատարեալ է Հ. Ա. Բագրատունու տպագրութիւնը մէկ հատորով, Ս. Ղազար, 1860, առանց այլընթերցուածների. նախկին Մխիթարեան Մատթիա Գարագաշեանի գլխաւորութեամբ իրականացուած հրատարակութիւն, Պոլիս, 1895, Աստուածաշնչի Ամերիկեան ընկերութեան պատուէրով եւ բողոքական Ս. Գրքի կանոնով, այսինքն պարականոն համարուած որոշ գրքերի պակասով: Հին կտակարանում գրանցուած են երբայական բնագրի եւ Եօթանասնից յունարէն թարգմանութեան տարբերակները գրաբար թարգմանութեամբ, Նոր կտակարանում յունարէն բնագրի եւ հայերէն որոշ ձեռագրերի այլընթերցուածների նշամբ էջատակում. իսկ բնագրի ընտրութեան մասին յառաջարանում ասուած է հետեւեալը. «Վասն Հայերէն օրինակին, զորոյ զհետ զնացաք, ասեմք եթէ լաւագոյն համարեցաք չերթալ